

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ

Գուրգեն Մելիքյան  
**Ֆիրդուսին և իր  
«Շահնամեն»  
հայկական  
մշակույթում և  
գրականության մեջ**





YEREVN STATE UNIVERSITY

GURGEN MELIKYAN

FERDOWSI AND HIS  
"SHAHNAMEH" IN ARMENIAN CULTURE  
AND LITERATURE

YEREVAN  
YSU PUBLISHING HOUSE

---

دانشگاه دولتی ایروان

گورگن ملیکیان

فردوسی و «شاهنامه» در فرهنگ و  
ادبیات ارمنی

ایروان  
انتشارات دانشگاه دولتی ایروان

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍԻՆ ԵՎ ԻՐ «ՇԱՀՆԱՄԵՆ»  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՏԴ 821.222.1.0:008(=19)  
ԳՄԴ 83.3(5Իրան)+63.3(5Հ)-7  
Մ 490

Հրատարակության և երաշխավորել  
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Խմբագիր՝ Բ.Գ.Պ., պրոֆ. Արմանուշ Կոզմոյան  
Գրախոսներ՝ Ա.Գ.Թ., պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան  
Բ.Գ.Թ., դոց. Լիլիթ Սաֆրաստյան

Մելիքյան Գուրգեն

Մ 490 Ֆիրդուսին և իր «Շահնամեն» հայկական մշակույթում և  
գրականության մեջ / Գ. Մելիքյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2026,  
144 էջ:

Աշխատությունը նվիրված է միջնադարյան Իրանի հռչակավոր բա-  
նաստեղծ Աբու ալ-Ղասեմ Ֆիրդուսինին և նրա դյուցազներգության՝  
«Շահնամեի» քննությանը և թարգմանություններին հայկական միջա-  
վայրում: Այն մի ամբողջական փորձ է ներկայացնելու իրանցի մեծա-  
նուն բանաստեղծին և նրա անմահ երկը հայկական մշակույթում ու  
գրականության մեջ:

این کتاب به حکیم ابوالقاسم فردوسی شاعر حماسه سرای  
ایران دوران قرون وسطی و بررسی و ترجمه های "شاهنامه" در میان  
ارمنیان اختصاص داده شده است. اثر مذکور پژوهشی است در زمینه  
معرفی تصویری کامل از این شاعر بزرگ ایرانی و شاهکار جاودان  
وی در فرهنگ و ادب ارمنی.

ՀՏԴ 821.222.1.0:008(=19)  
ԳՄԴ 83.3(5Իրան)+63.3(5Հ)-7

ISBN 978-5-8084-2743-3

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427433>

© ԵՊՀ հրատ., 2026

© Մելիքյան Գ., 2026

Նվիրում եմ հորս՝ Վրեժ Մելիքյանի և  
մորս՝ Մարթա-Մարտին Մելիքյանի հիշատակին

به یادبود پدرم وریژ ملیکیان و مادرم مارتا مارتین ملیکیان  
پیشکش می کنم

## Բովանդակություն

### فهرست مطالب

Երկու խոսք Իրանի և Հայաստանի մասին.....	7
Խոսք գրքի մասին .....	9
Ֆիրդուսին և իր «Շահնամեն» հայկական մշակույթում և գրականության մեջ .....	17
71..... سخنى چند درباره ايران و ارمنستان گفتارى درباره ى فردوسى و «شاهنامه»	
74..... در فرهنگ و ادبيات ارمنى	
80..... فردوسى و «شاهنامه» در فرهنگ و ادبيات ارمنى	
Հավելված1 .....	136
136.....	ضمیمه
Հավելված 2 .....	140
140.....	ضمیمه

## Երկու խոսք Իրանի և Հայաստանի մասին

Իրանն ու Հայաստանը դարավոր կապեր ունեն միմյանց հետ: Այդ կապերը, բարեբախտաբար, մինչ այժմ էլ ամուր են և կայուն: Դրանք պատմության ամբողջ ընթացքում հիմնականում մշակութային բնույթ են կրել, և դրանց արժեքն ու մեծությունը հենց այդ մշակութային բնույթի մեջ են: Այդ կապերն այնքան խորն են փոխկապակցված ու ամուր, որ դրանց շնորհիվ Հայաստանում ևս ծաղկել է իրանական փառավոր և վեհ մշակույթը:

Հայաստանը աշխարհագրական-քաղաքական տեսանկյունից ինքնուրույն է, սակայն ես այն համոզմանն եմ, և կարելի է ասել՝ լիովին վստահ եմ, որ այս գեղեցիկ և հմայիչ երկիրը մշակութային առումով ինչ-որ չափով իրանական երկիր է և ունի բացառիկ և հիացմունք հարուցող տեղ ու դիրք Իրանի մշակութային աշխարհագրության լայն ու բազմաշերտ տարածքում:

Ավելին՝ առանց որևէ երկմտանքի կարելի է ասել, որ մշակութային և պատմական որոշ ոլորտներում Հայաստանը նույնիսկ ավելի «իրանական» է մնացել, քան ժամանակակից Իրանը: Այստեղ դեռ կարելի է հանդիպել հնագույն Իրանի մաքուր և նուրբ հետքերն ու նոստալգիկ հիշատակները, որոնք ներկայիս Իրանում այլևս չեն պահպանվել: Օրինակ՝ միջին պարսկերենից և պեհլևի լեզվից պահպանված բազմաթիվ բառեր, որոնք նոր պարսկերենում այլևս չեն գործածվում, դեռ կենդանի են հայերեն լեզվում և երբեմն նույնիսկ հիմնական բառապաշարի մաս են կազմում:

Ահա թե ինչու ես Հայաստանն ընկալում եմ որպես հարազատ հող և այն համարում եմ Իրանի մշակութային աշխարհագրության մեջ ամենահիմնարար և ազնվագարմ տարածքներից մեկը: Այդ պատճառով էլ, որպես մի մարդ, ով խորապես ճանաչում է Իրանն ու հիացած է նրա մշակութային, բարոյական և պատմական փառքով, ես մեծ ակնածանքով եմ վերաբերվում Հայաստանին և այն համարում մաքուր ու փայլուն հայելի, որի մեջ կարելի է հստակորեն տեսնել հին, վեհ Իրանի ճշմարիտ յուրահատուկ դիմագիծը:

Իմ ամենամեծ ուրախություններից և բերկրանքներից մեկն այն է, որ հայերն իրենք ևս գիտակցում և գնահատում են այդ ազնվական և հաճելի կապը: Այդ գնահատանքի ամենաարժեքավոր նշաններից մեկն այն է, որ հայ մտավորականներն ու գիտնականները, հարգանքի արժանի թվով, ուսումնասիրել են այս փոխկապակցվածությունը՝ հեղինակելով արժեքավոր և նշանակալի աշխատություններ: Նրանք տարիներ շարունակ իրենց կյանքն նվիրել են այդ բարդ ու նուրբ գործին՝ գիտելիքի և իմացության սերմեր ցանելով, որոնք հետագայում վերածվել են հզոր ու բազմաճյուղ ծառերի:

Այդ գիտնականներից մեկը իրանագետ մեծարգո **Գուրգեն Մելիքյանն** է՝ իմաստուն և իրանասեր մարդ, որին թող Աստված շնորհի երկար կյանք և բարի բախտ: Նա հարուստ գիտական ժառանգություն ունի իրանագիտության ոլորտում, իսկ նրա վերջին ուսումնասիրություններից մեկը՝ **«Ֆիրդուսին և «Շահնամեն» հայկական մշակույթում և գրականության մեջ»**, ընդգրկուն և խորը հետազոտություն է, որտեղ համադրվել են շահնամեագիտական հայերեն ուսումնասիրությունները՝ որպես իրանագիտության անբաժան և կարևոր մաս: Այս գործը բացում է նոր դռներ իրանասերների առաջ՝ ցույց տա-

լով այն հսկայական դաշտը, որը հայ գիտնականները բացահայտել են շահնամեագիտության ոլորտում:

Թող Աստծո կողմից երջանկություն և բարգավաճում տա Մելիքյան պրոֆեսորին, մյուս հայ գիտնականներին և բոլոր հայերին, որոնք, իմ տեսանկյունից, երկրակիցներ են՝ ապրող մեզ համար հարազատ հողում:

**Միր Ջալալադդին Կեզազի**

1401 թ. հունիսի 14

## Խոսք գրքի մասին

Գուրգեն Մելիքյանի ուսումնասիրությունը նվիրված է համաշխարհային մտքի ու գրականության մեծերից մեկի՝ Ֆիրդուսու գործերի և հատկապես «Շահնամե» ասքի հայերեն թարգմանություններին և գնահատումներին: Ըստ ամենայնի գնահատելով Ֆիրդուսու գրական ողջ ժառանգությունը, մատնանշելով նրա դերն ու նշանակությունը ոչ միայն Իրանի, այլև ողջ աշխարհի մշակութային կյանքում՝ Գ. Մելիքյանը մանրակրկիտ անդրադառնում է Ֆիրդուսու գրականության հայերեն գրեթե բոլոր թարգմանություններին, իրավացիորեն նշում, որ «...մեր ժողովուրդը վաղնջական ժամանակներից լավ ծանոթ է եղել իրանական հնագույն ստեղծագործություններին», որոնց թվում և «Շահնամեի» գրավոր աղբյուրներին: Իր հետազոտությունում Գ. Մելիքյանը շարադրում է Մեծ արևելցու պոեմը արժևորած տասնյակ հայ ուսումնասիրողների և գիտնականների կատարած գործը, բարձր գնահատում նրանց վաստակն ու նվիրումը, նշում այն էական դերը, որ ունեցել են դրանք հայ մտքի ու մշակույթի զարգացման գործում: Մելիքյանի կողմից նրանց կատարած գործերի տեղեկատվությունը ոչ միայն գիտական աղբյուրագիտության հիմք կարող է ծառայել Ֆիրդուսու գործերը ուսումնասիրողների համար, այլև կողմնորոշիչ ազդակ ու խթան գաղափարական ու գիտական վեր ելնող ուղիներով ընթանալու համար:

Մելիքյանի այս գրությունը լոկ գիտական փաստագրությունն չէ, այլև արժևորում ու գնահատում հայ իրականության մեջ ֆիրդուսագիտության ասպարեզում կատարված երկարատև գործի և գալիս է հաստատելու գրական-մշակութային

ու հոգևոր-ազգային այն կապը, որ կա հայ և պարսիկ ժողովուրդների, առհասարակ Արևելքի առաջադեմ մի շարք ժողովուրդների ու նրանց մշակույթների միջև, որն այնքան հանճարեղորեն բնութագրել է Հովհ. Թումանյանն իր «Բայց Արևելքն է հայրենիքն իմ հոգու» տողով: Հոգու, այսինքն՝ մարդկային ու ազգային բուն էության հենց այդ հարազատությունն է, որ մի շարք հայ գրողների, մտավորականների ու գրականագետների մղել է խորանալու Արևելքի մեծ մտածողներից մեկի՝ Ֆիրդուսու կյանքի ու ստեղծագործությունների մեջ, այնտեղ տեսնելու համաշխարհային ու համամարդկային անանց արժեքներ:

Մանրակրկիտ որոնումները Մելիքյանին հանգեցրել են այն մտքին, որ ինչպես ինքն է գրում. «...Ֆիրդուսու անձի ու գրականության հանդեպ առաջին մեծ հետաքրքրությունը ցուցաբերել է մեր ամենամեծ ռոմանտիկ գրողը՝ Րաֆֆին», և որ այդ հետաքրքրությունը այնուհետև փոխանցվել է մյուս հետազոտողներին, դարձել հենակետ:

Մելիքյանի աշխատանքի արժեքավոր կողմերից մեկն այն է, որ նա առիթը բաց չի թողնում պատմական էքսկուրսներ կատարելու այն անձանց և այն վայրերի մասին, որոնք այս կամ այն կերպ առնչվել են թե՛ Ֆիրդուսու կյանքն ու գործը ուսումնասիրողներին և թե՛ նրա գործերը տպագրելու հետ կապված գործընթացներին:

Աշխատանքում այդպիսի ուշագրավ հաղորդումներ են պարունակում Շուշի բերդաքաղաքին նվիրված էջերը, որտեղ Գ. Մելիքյանը հատկապես շեշտում է գրական-մշակութային այն բուռն կյանքը, որի մեջ ապրում էր քաղաքը, և որն այն դարձրել էր առհասարակ հայ հոգևոր և մտավոր կենտրոններից մեկը: Նկատենք, որ այդ ամենն ինքնանպատակ չէ և ոչ

Էլ ուսումնասիրության թեմայից դուրս, քանի որ գրքի հեղինակն ընդհանրացնում է այն կարևոր միտքը, որ հայ թարգմանիչներն ու հրատարակիչները Շուշիում «առանձնակի վերաբերմունք և ուշադրություն են դարձրել հատկապես պարսկական գրականության հանդեպ», տպագրել «Ֆիրդուսի. «Ռուստամ և Սոհրաբ», ամբողջական վեպ և զանազան հատվածներ Շահնամեից», «Ֆիրդուսի. «Ջոհակ Բյուրասայի Աժդահակ»» գրքերը (որոնց հեղինակը Ս. Գյուլզադյանսն էր), որն ուղենշանային և կողմնորոշիչ դեր էր ունենալու ողջ գրական գործընթացներում հատկապես հայրենասիրության առումով:

Ֆիրդուսու «Շահնամեն» հայ կյանքի մեջ աչքի է ընկել նաև այն առումով, որ այն մեր իրականության մեջ քիչ պատահող այն գործերից է եղել, որն ինքնին դարձել է բանավոր փոխակերպումների ու պատումների նյութ: Ժողովրդական տարբեր խավերում ոչ միայն առանձին հատվածներ են երգվել կամ պատմվել, այլև համառոտագրվել, տեղային հավելումներ, շեղումներ ու կրճատումներ են կատարվել, ասացողները առանձին հատվածներ են արտասանել բարբառներով, մանավանդ շեշտվել են պոեմում գործող հերոսների քաջագործությունները, և բանը հասել է նրան, որ այդ բանահյուսական տարբերակները ժամանակի ընթացքում ինքնուրույնություն են ձեռք բերել, անգամ տպագրվել առանձին գրքի տեսքով, որոնք Ֆիրդուսու նկատմամբ համաժողովրդական սիրո վառ ապացույցներ են: Այս ամենի մասին ևս Մելիքյանը ստույգ տեղեկություններ է տալիս իր աշխատությունում, անուն առ անուն նշում ասացողներին, բանահավաքներին՝ միշտ ընդգծելով այն խթանիչները, որոնք ոչ միայն գրական էին, այլև ազգային-գոյաբանական մղումների արդյունք, կյանքի իմաստավորման ու գնահատման արդյունք:

Գ. Մելիքյանը հետաքրքիր մանրամասներ է վեր հանում Ֆիրդուսու ստեղծագործությունների թարգմանիչ, բանասեր, պարսկական պալատում խանի տիտղոս ստացած բժիշկ Հարություն Թիրյաքյանի մասին, որի ներդրումը հայ ֆիրդուսագիտության մեջ կարևոր է ոչ միայն նրա գործերի հայացմամբ, այլև, որ շատ կարևոր է, Ֆիրդուսու ստեղծագործություններին վերաբերող «ծանոթագրություններով», ասել է՝ ուսումնասիրությամբ, մեկնությամբ, վերլուծությամբ, քննությամբ:

Հայտնի է, որ Ֆիրդուսին «Շահնամեն» գրել է շուրջ չորս տասնամյակի ընթացքում, զիրք, որ արքաների մասին էր և «արքաներին վայել»: Մի փոքր փոխելով վերոհիշյալ հատվածը՝ ասենք, որ Գուրգեն Մելիքյանը ևս, ըստ ամենայնի, շատ երկար է որոնումներ ու ճշտումներ կատարել հայերեն ֆիրդուսագիտության աղբյուրներն ու ընդգրկումներն ամբողջական ու ամփոփ ներկայացնելու համար և այդ՝ «ընթերցողներին վայել» իր այս ուսումնասիրությամբ մեծ ներդրում կատարել հայ և պարսիկ ժողովուրդների հոգևոր կապի է՛լ ավելի ամրացման գործում: Ինչպես Ֆիրդուսին է իր պոեմը գրելիս ուսումնասիրել հնագույն աղբյուրներ, այնպես էլ Մելիքյանն է պրպտումներ կատարել, ճշտել ու մատուցել հայ մտավորականների, մշակույթի պատմաբանների, գրականության թարգմանիչների, գրողների ու գրականագետների կատարած գործը՝ անցյալի ու ոչ վաղ անցյալի էջերում հայտնաբերելով Ֆիրդուսուն վերաբերող ուշագրավ գրություններ, մեկնություններ ու թարգմանություններ:

Ուսումնասիրության կարևոր հատվածներից մեկը վերաբերում է խորհրդային տարիներին Ֆիրդուսու նկատմամբ ցուցաբերված բուռն հետաքրքրություններին, որոնց համար խթան է հանդիսացել 1934 թ. բանաստեղծի հազարամյա հո-

բեյյանի նշումը, որի ընթացքում տպագրվել է նաև «Ֆիրդուսի. Ռոստամ և Զոհրաբ» վեպ Շահնամեից» գիրքը: Մելիքյանը իրավացիորեն գրում է, որ գրքի հրատարակման բուն ակունքներում կանգնած է եղել Եղիշե Չարենցը, ով ոչ միայն հետևել է գրքի ձևավորմանը, նկարագարողումների համար հրավիրել Սարտիրոս Սարյանին, այլև խմբագրել է այն:

Օգտագործելով առիթը՝ Գ. Մելիքյանը հետաքրքիր նկատումներ ու եզրահանգումներ է կատարում՝ նշելով, որ Չարենցի նվիրումը լույս տեսնելիք գրքի վերաբերյալ բոլորովին էլ պատահական չի եղել, այլ առ Ֆիրդուսին ունեցած ներքին հոգեկան կապից է բխել, որին եկել է հավելվելու Չարենցի ծնողների պարսկահայատակ եղած լինելու հանգամանքը, ինչպես և այն իրողությունը, որ Չարենց-բանաստեղծն իր հոգում միշտ կրել է «արևն Իրանի» և «վարդերն Շիրազի»:

Գ. Մելիքյանի աշխատանքն արժեքավոր է ևս մի հատկանիշով: Ուսումնասիրողը գրական շրջանառության մեջ է դնում տասնյակ ու տասնյակ հայ մտավորականների՝ Ֆիրդուսու կյանքին ու ստեղծագործություններին վերաբերող նյութեր՝ Ստեփանոս Նազարյանցի, Մեսրոպ Թաղիադյանի, Բաֆֆու, Փիլիպոս Վարդանյանի, Նիկողայոս Ադոնցի, Հովսեփ Միրզայանի, Գարեգին Լևոնյանի, Գարեգին Հովսեփյանի, Բաբկեն Չուքասզյանի, մեծ լեզվաբան Մանուկ Աբեղյանի ու էլի շատ նվիրյալների ֆիրդուսագիտության մեջ կատարած մեծ ու անուրանալի գործերը: Այս առումով հատկապես ուզում ենք առանձնացնել Ավետիք Իսահակյանի մի բնութագիրը, որն իր խորքով և արտահայտած ճշմարտությամբ աննախադեպ կարելի է համարել. «Շահնամեն փրկել է Իրանը թուրքանալուց եւ արաբանալուց»: Այսպիսի բնութագիր տալու համար իսկապես որ հանճար պետք է լինես, մեր կողմից

հավելենք՝ Բսահակյանի այդ խոսքերը տեսնելու համար Գ. Մելիքյանի ամենատես հայացքից պետք է ունենալ: Առանց վարանման կարելի է ասել, որ ֆիրդուսագիտության ամեն փաստի, համաշխարհային այդ մեծ դեմքի և նրա գործի հետ կապված յուրաքանչյուր ուսումնասիրողի, հրատարակչի, գործչի մասին գրելիս Գ. Մելիքյանը ցուցաբերում է նյութի համակողմանի իմացություն, շրջանառության մեջ դրվող փաստերի նկատմամբ պատասխանատվություն, այսպես ասած՝ լրացուցիչ նյութերի անհրաժեշտ օգտագործումներ՝ միշտ հանդես բերելով պատմաքննական բանիմացություն և ճշգրիտ գնահատումներ:

Ինչպես երեկ, այնպես էլ վաղը, ասել է թե՛ միշտ, ֆիրդուսագիտությունն իր զարգացման ուղիով է ընթանալու, քանի որ մեծ հանճարի մտքերը շատ հարիր են մեր ժողովրդի հոգևոր և մտային ձգտումներին և փայփայած երազանքներին, իսկ նրա գրական տաղանդը հար գրավելու է ընթերցողների սրտերը:

Կասկած չկա, որ Գ. Մելիքյանի՝ տքնանք ու երկար պրպտանքներ կլանած այս ուսումնասիրությունը կարևոր մի օղակ և նոր աստիճան է ֆիրդուսագիտության մեջ և ուղիղ գծով տանում է հայ և պարսիկ ժողովուրդների հոգևոր և մշակութային անքակտելի կապերի ու բարեկամության է՛լ ավելի ամրացման մեծ գործին: Մանավանդ որ կա ևս մի կարևոր գործոն՝ Ֆիրդուսու գրականության հմայքը, այն, որ, խոսելով Ֆիրդուսու մասին, ժամանակին նշել է Հովհաննես Թումանյանը՝ պոեզիայի հմայքը, Մեծ լոռեցու խոսքերով ասած՝ նրա «վեհ ու վսեմ ներդաշնակությունը», որը միշտ էլ հոգեկան վայելք է:

Այդպիսին է ոչ միայն Ֆիրդուսու, այլև ողջ պարսկական դասական գրականությունը, որը կարելի է նրա վառ ներկայացուցիչներից մեկի՝ Հաֆեզի անվան արտահայտած իմաստով բնութագրել՝ գիտուն, գրագետ, կրթյալ, ասել է՝ վեհ և գեղեցիկ:

**Պրոֆ. Արծրուն Ավագյան**

## **Ֆիրդուսին և իր «Շահնամեն» հայկական մշակույթում և գրականության մեջ**

19-րդ դարի երկրորդ կեսից հայության մեջ գորանում էին ազատասիրական և ազատագրական ձգտումները, որոնք մեծապես մարմնավորվում էին հայ գրականության և հասարակական մտքի բազմաթիվ դրսևորումներում: Գրականության մեջ մեծ տեղ են գրավում պատմահայրենասիրական երկերը: 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի հայ թարգմանական գրականությունը հիմնականում նույն՝ պատմահայրենասիրական ուղղորդումն ունի: Եվ ամեննին պատահական չէ, որ հայ թարգմանիչները դիմում են Ֆիրդուսու «Շահնամեի» թարգմանությանը: «Շահնամեն» հերոսականության և անձնագոհության փառահեղ պատմություն է:

Իրանի հնագույն և մեծ ժողովուրդը 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի առաջին տասնամյակում ստեղծել է իր գրականության և մշակույթի մեծագույն արտահայտությունը, համաշխարհային արժեքի և նշանակության գործ՝ հռչակավոր «Շահնամե» մեծածավալ երկը, որի հեղինակը Աբուլղասեմ Ֆիրդուսին է (940-1020/1030), ոչ հարուստ մի հողատիրոջ որդի:

«Շահնամե» վիպասքը վիթխարի է իր ծավալով՝ մոտ 60.000 տող, և իր բովանդակությամբ համաշխարհային երևույթ է՝ իր էպիկական խորքով արտացոլելով Իրանի ժողովրդի հոգևոր հարստությունը, ազգային անպարտելի ոգին, ստեղծագործական հզոր կարողությունը և բարոյական բարձր նկարագիրը: Ֆիրդուսին իր «Շահնամեն» ընծայել է սուլթան Մահմուդ Ղազնևիին (996-1030):

«Շահնամեն» կազմված է 50 «թագավորություն»-ից («փառիշահ»-ից), որոնք անհավասար ծավալներ ունեն՝ մի քանի

տասնյակ բեյթից մինչև մի քանի հազար բեյթ: Ամեն մի «թագավորություն» իր ներսում բաղկացած է մեծ ասքերից՝ դաստաններից:

«Շահնամեի» ամենից հայտնի դաստանները հետևյալներն են՝ «Զալ և Ռուդաբե», «Ռուստամի յոթ քաջագործությունը», «Ռուստամ և Սոհրաբ», «Միավուշ», «Քամոս Քուշանի», «Իսփանդյարի յոթ քաջագործությունը» և «Ռուստամ և Իսփանդյար»:

Հայ և պարսիկ ժողովուրդները դարերով ապրել են կողք կողքի և երկար ժամանակ էլ՝ մեկ միասնական կյանքով: Եվ անկարելի է, որ դարերի ընթացքում «Շահնամեի» նման վիթխարի կոթողն իր արձագանքները չունենար հայ գրական-մշակութային կյանքում: Եվ իրոք, հայ ժողովուրդը վաղնջական ժամանակներից լավ ծանոթ է եղել իրանական հնագույն ստեղծագործություններին, որոնց արտացոլումները առկա են մեր հին պատմագրության մեջ: Դրանց թվում են «Շահնամեի» գրավոր մի քանի աղբյուրները՝ «Յատկար-ի Զարիբան», «Խոդայ Ինամե», «Կարնամակ-ի Արտաշիր-ի Պապական» և այլն:

Իրանական մշակույթի արձագանքներն առկա են նաև հայ հնագույն մատենագրության մեջ: Դեռևս հինգերորդ դարի հայ մատենագրությունը արձանագրել է դրանք: Բնական է, որ խոսքը «Շահնամեի» նախահիմքերի, իրանական հնագույն գրավոր աղբյուրների՝ «Յատկար-ի Զարիբան»-ի, «Կարնամակ-ի Արտաշիրի Պապական»-ի մասին է:

Հայ-իրանական առնչությունները հայ գիտնականները հանգամանորեն ուսումնասիրել և արձանագրել են դրանց առկայությունը հայ հնագույն մատենագրության մեջ՝ առանձնապես Պատմահայր Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի երկերում: Այդ հարցերին հետազայում

անդրադարձել են գրեթե բոլոր այն հայագետները, որոնք գրել են հայ հնագույն մատենագրության մասին:

Դրանց մեջ պետք է առանձնացնել նշանավոր հայագետ, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի (1893-1970) «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամե»-ում և հայ մատենագրության մեջ» (1934) և հայագետ, բանասեր Առաքել Սարուխանի (1863-1949) «Շահ-Նամեն և Մովսես Խորենացին» (1936) ուսումնասիրությունները:

Հայ միջնադարյան բանաստեղծները նույնպես քաջաձանոթ էին պարսից գրականությանը, գիտեին Ֆիրդուսուն և իր «Շահնամեն»:

Բանաստեղծ, մանկավարժ, Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Սմբատ Շահագիզը (1840-1907) իր «Ամառնային նամակներ» գրքում (Մոսկվա, 1897) խոսում է 11-րդ դարի մատենագիր և փիլիսոփա Գրիգոր Մագիստրոսի չափածո մեծածավալ մի երկի մասին և հիշում է պարսից ազգային մեծ բանաստեղծին: Իր գործում Շահագիզը նախ շատ բարձր է գնահատել Ֆիրդուսուն («Իրանի ամենամեծ բանաստեղծը՝ Ֆիրդուսին») և ապա ցույց տվել ու պնդել, որ «Գրիգոր Մագիստրոսը հետևել է Ֆիրդուսի բանաստեղծին» (նշվ. աշխ., էջ 117):

Պրոֆ. Մանուկ Աբեղյանը մի առանձին աշխատությամբ («Շահնամա-ի ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ», Երևան, 1934) ցույց է տվել «Շահնամեի» տաղաչափական յուրահատկությունների ակնհայտ ներկայությունը հայ բանաստեղծության մեջ՝ Կոստանդին Երզնկացուց (14-րդ դար) մինչև Եղիշե Չարենց (1897-1937):

Այսպես, Մ. Աբեղյանն իր «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության երկրորդ գրքի «Կոստանդին

Երզնկացի» գլխում նշում է, որ Կոստանդին Երզնկացին իր մի տաղը հորինել է «Շահնամեի» տաղաչափությամբ՝ իր բանաստեղծությանը ավելացնելով հետևյալ ծանոթությունը. «Այր մին [նստ]ել կայր և Շահնամայ ասէր ձայնով, նա՛ եղբայրք խնդրեցին թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ, եւ շինեցի զբանքս զայս ի Շահնամայի ձայն կարդացէք»<sup>1</sup>:

Հայտնի բանասեր, Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսուչ, պրոֆեսոր Կարապետ Կոստանյանցը (1853-1920) իր «Գրիգոր Աղթամարցին և յուր տաղերը» (Թիֆլիս, 1898) աշխատության մեջ համոզիչ քննությամբ ցույց է տվել, որ 16-րդ դարի հայ տաղասացը լավ ծանոթ է եղել «Շահնամեի» տաղաչափությանը, բառապաշարին և առանձին հատվածներին մանրամասնությամբ, ինչպես, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացի-Իսքյանդարի հատվածին:

1846 թ. գրող, խմբագիր, հանրային ու կրթական գործիչ Մեսրոպ Թաղիադյանը (1803-1858) Կալկաթայում հրատարակում է իր «Պատմութիւն Պարսից» աշխատությունը: Այստեղ Թաղիադյանը ներկայացրել է Պարսկաստանի մեծ բանաստեղծներին, առանձնացրել Հաֆեզին, Սաադիին, Դաղիդիին: Նա առանձնակի համակրանքով է խոսել Ֆիրդուսու մասին՝ ընդգծելով այն հանգամանքը, թե ինչպես նա Դաղիդիի սկսած գործի ու նրա մոտավորապես հազար տողի վրա հոյակերտեց «Շահնամեի» աննման ապարանքը. «... հրաշակերտ յօրինեաց յայն շինութիւն զարմանազան, որ առաւել քան զամբարտակն հսկայից՝ ի Բաբելոն տնելով՝ մշտջենաւորեաց առ յապայ

---

<sup>1</sup> **Մանուկ Աբեղյան**, Շահնամայի ձևական ազդեցությունը, Երկեր, հատոր չորրորդ, Երևան, 1970, էջ 467:

գփառս հնութեանց Պարսկաստանի, անուանեալ նոցա Շահ-նամա կամ Գիրք Թագաւորաց»<sup>2</sup>:

Առաջին հայ գրողը, բանասերը, գիտնականը, որը գիտական-քննական խոր հայացքով է դիտարկել պարսիկ մեծ բանաստեղծի կյանքն ու գրականությունը, արևելագիտության դոկտոր, Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանցն է (1812-1879):

Նա արևելագիտության դոկտորի աստիճանի է արժանացել 1849 թ. «Շահնամե»-ին նվիրված ռուսերեն գիտական հետազոտության համար: Աշխատությունը վերնագրված է՝

«Абуль-Касем Фирдоуси Тусский, творец книги царей»

Шах-Наме с присовокуплением краткого образа истории персидской поэзии до исхода XV столетия по Р.Х.

Сочинение доктора восточной словесности Степана Назарянца:

Книга первая, Казань, 1849, 104 стр.

Книга вторая, Москва, 1851, 96 стр.

Հայերեն՝ Աբուլ-Կասեմ Ֆիրդուսի Թուսցի

Շահ-Նամե Թագավորաց գրքի ստեղծողը, հավելամով պարսկական պոեզիայի պատմության համառոտ տեսությամբ մինչև քրիստոսի ծննդյան XV դարը:

Երկասիրության Արևելյան դպրության դոկտոր Ստեփան Նազարյանցի:

Գիրք առաջին, Կուգաս, 1849, 104 էջ:

Գիրք երկրորդ, Մոսկվա, 1951, 96 էջ:

---

<sup>2</sup> Պատմութիւն Պարսից, Յօրագրէ Մեսրոպայ Դ. Թաղիադեանց աւ. սարկաւազի Ս. Էջմիածնի, Կալկաթա, 1846, էջ 75:

(Աբուլ-Կասեմ Ֆերդաուսի, Թուսցի, ստեղծողն Արքայից Գրքի, որ հայտնի է Շահ-Նամե անվամբ):

Իր այս աշխատությանը Նազարյանցը կցել է մեկ այլ գործ, որն ընդգրկում է պարսկական պոեզիայի պատմությունը մինչև 15-րդ դարի վերջը: Նազարյանցի այս ուսումնասիրությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը տպագրվել է 1849 թ. Կազանի համալսարանի գիտական տեղեկագրում, երկրորդ մասը՝ 1851 թ.՝ Մոսկվայում:

1856 թ. Վենետիկում «Բազմավեպ» ամսագիրը տպագրում է «Ֆերտեվսի և իրեն Շահնամե քերթուածը» հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնում է Ֆիրդուսու կենսագրությունը և խոսում է «Շահնամեի» ֆրանսերեն առաջին թարգմանության մասին<sup>3</sup>: Հոդվածը անստորագիր է:

1884 թ. Բաքվում լույս է տեսնում աշուղ-բանաստեղծ Պետրոս Մադաթյանցի, որ հայտնի է նաև Սեյադ կեղծանունով, «Երկասիրութիւն Սեյադի կապիտան Պետրոս բեգի Մադաթեանց» գրքույկը: Մադաթյանցի գրքույկը Ֆիրդուսուն վերագրվող «Երգիծանք»-ի (ընդդեմ Շահ-Մահմուդի) թարգմանությունն է, որն ինքը կոչել է «Երգիծաբանութիւն»: Թարգմանությունը 202 տող է:

18-րդ դարում հայ մեծ բանաստեղծ և երաժիշտ Սայաթ-Նովան (1722-1795 թթ.) իր «Հայերեն խաղեր»-ում՝ հայերեն գրված բանաստեղծություններում, քանիցս դիմում է «Շահնամեի» նշանավոր պատկերներին և կերպարներին: 17-18-րդ դարի հայ աշուղական դպրոցների շատ ներկայացուցիչներ

---

<sup>3</sup> «Բազմավեպ», 1856, №23, էջ 362-366:



Սայաթ-Նովայի խաղերում, անշուշտ, ներկա է նաև «Շահնամեի» մեծ հերոսը՝ Ռոստոմ-Չալը:

*Թե դուն էշխի հիդ մանգալըն հարցընիս՝  
Չի դիմանա Ռոստոմ-Չալըն հարցնիս...*

*(«Էշխըն վառ կրակ է...»)*

*Ամեն մարդ չի կանա ճանգի շահով շրքար արմանալու:*

*Մարդ հիդըդ չի կանա խոսի, Ռոստոմի-Չալ արմանալու:*

*(«Հընդու քաղաքեմեն հանած ջավահիր»)*

Սայաթ-Նովայի տաղերում ներկա է նաև Ալեքսանդր Մալեդոնացին, որի անունը նա անշուշտ գիտեր «Շահնամեից»:

*Սկանդարի-Չուլդարի թողած ջավահիր իս, անգին լալիս...*

*(«Անգին ալըն վրրեդ շարած...»)*

Իհարկե, Սայաթ-Նովայի կապը «Շահնամեի» բանաստեղծական արվեստի հետ միայն պարզ արձանագրումով կամ թվարկումով չի ավարտվում, այն շատ ավելի խորքային է և արժանի առանձին քննության:

Ֆիրդուսու և իր հանճարեղ երկի՝ «Շահնամե» անգուգական պոեմի հանդեպ հայ գրական գործիչների հետաքրքրությունը նորովի արթնացում ունեցավ 19-րդ դարի երկրորդ կեսին: Այդ հետաքրքրության մեջ էական դեր և նշանակություն են ունեցել երկու կարևոր հանգամանք:

Առաջինը հայ գրականության ներքին զարգացումն է, նրա հետաքրքրությունների սահմանների ընդարձակումը, հայ գրողների ճանաչողական հայացքը այլ ժողովուրդների գրականության հանդեպ:

Երկրորդ կարևոր հանգամանքը եվրոպական մշակույթի փարերար ազդեցությունն է, եվրոպական գրական ու գեղարվեստական մտածողության հայկական արձագանքը:

Հայտնի իրողություն է, որ 18-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած եվրոպական գրողներն ու արվեստագետները «հայտնագործում են» Արևելքի գրականությունն ու մշակույթը: Դրա սկիզբը կարելի է համարել արաբական «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների՝ Անտուան Գալլանի ֆրանսերեն թարգմանությունը, որը լույս է տեսնում 1703-1713 թթ. 12 հատորով: Նույն հեքիաթների հաջորդ ուշագրավ թարգմանությունը Ջոնաթան Սքոթի թարգմանությունն է, որ լույս է տեսնում 1811 թ., 6 հատորով: Ջոնաթան Սքոթը թարգմանել էր Գալլանի ֆրանսերեն թարգմանությունից, և, այնուամենայնիվ, այդ թարգմանությունը նույնպես մեծ դեր է խաղում Արևելքի գրականության հանդեպ մեծ հետաքրքրություն արթնացնելու գործում:

Արևելքի մշակույթի և գրականության «հայտնագործությունը» այդուհանդերձ պատկանում է ռոմանտիկ գրողներին՝ Ջորջ Գորդոն Բայրոնին, Պերսի Բիշօ Շելլին, Վալտեր Սքոթին, Հայնրիխ Հայնեին և, իհարկե, ռոմանտիկներից է՛լ ավելի առաջ՝ մեծն Յոհան Վոլֆգանգ Գյոթեին:

Եվ բնական է, որ հայկական ռոմանտիզմի հեղինակները նույնպես իրենց հայացքը դարձնեին դեպի մերձակա Արևելքը:

Տրամաբանական է, որ Ֆիրդուսու անձի և գրականության հանդեպ առաջին մեծ հետաքրքրությունը ցուցաբերել է մեր ամենամեծ ռոմանտիկ գրողը՝ Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան, 1835-1888): Նա ծնվել է Պարսկաստանում՝ Սալմաստի նահանգի Փայաջուկ գյուղում, ապրել է պարսկական իրականության մեջ և հրաշալի իմացել Պարսկաստանի ոչ միայն կյանքն ու կենցաղը, այլև գրականությունն ու մշակույթը: Պա-

տահական չէ, որ Բաֆֆու գրականության մեջ Պարսկաստանի ու պարսկական կյանքի թեմաները զգալի տեղ են գրավում:

1878 թ. Բաֆֆին գրում է իր հետաքրքրական գործերից մեկը, որ կրում է «Ճանապարհորդություն Պարսկաստանի» խորագիրը: Բաֆֆու այս ուղեգրությունը նամականու տեսք ունի և ընդգրկում է 50 նամակ, որոնցից մեծ գրողը ժամանակին հրատարակել է միայն 23-ը:

Գրողի մահից հետո՝ 1892 թ., Սանկտ Պետերբուրգում, «Արաքս» հանդեսի Ա. գրքում հրապարակվում է Բաֆֆու մի ուշագրավ գրությունը՝ «Ուսում և գրականություն» խորագրով: Ուսումնասիրողներն այդ հոդվածը համարում են վերը հիշված նամականու չհրապարակված նամակներից մեկը, որին հրատարակիչ տվել է այդ խորագիրը: Իր այդ գրության մեջ Բաֆֆին տալիս է պարսկական դասական գրականության ընդհանուր պատկերը՝ յուրովի գնահատելով դասական հեղինակներին և նրանց գործերը: Հոդվածը ցույց է տալիս, թե որքան լավ գիտեր Բաֆֆին պարսկական գրականությունն ու մշակույթը: Մասնավորապես, ահա թե ինչ է գրում Բաֆֆին Ֆիրդուսու և իր անմահ «Շահնամեի» մասին. «Ֆիրդուսու հրաշալի գործը՝ «Շահնամեն», այդ անմահ արձանագրությունը ժողովրդական վիպասանության, թեև նա չունի Վալտեր Սկոտի պատմական ճշտությունները, բայց նրա վիպասանական ճարտարությունը գերազանցվում է Հոմերոսի «Եղիականից»»: Ֆիրդուսու հերոսները երևում են հսկայական գորությունով, նրանք ներկայացնում են տիտանական ուժեր, հերքույլյաններ, աջեմի փահլավաններ, իսկ մարդու հոգեկան հատկությունները բարյաց ազնիվ մտապատկերներով պահպանված են նրանց մեջ ամենայն ճշտությամբ»<sup>4</sup>:

---

<sup>4</sup> **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, տասը հատորով, հատոր ութերորդ, Երևան, 1957, էջ 615:

Առաջին հրապարակումից հետո Բաֆֆու այս հոդվածը վերահրատարակվել է քանիցս, որը նաև տեղ է գտել մեծ գրողի երկերի ինչպես տասնհատորյակում, այնպես էլ երկերի լիակատար տասներկու հատորանոց ժողովածուում:

1880-ական թթ. սկզբին Բաֆֆին թարգմանում է ռուս գրող Վ. Օվայաննիկովի «Ֆիրդուսի» վիպակը: Թարգմանությունը շարունակաբար տպագրվում է «Աղբիւր» ամսագրի 1884 թ. երեք համարներում (8-9 և 10):

Որ Բաֆֆին գերազանց գիտեր Ֆիրդուսու կյանքն ու գրականությունը, ցույց է տալիս այն իրողությունը, որ իր թարգմանության մեջ նա կատարել է մի շարք կարևոր ու անհրաժեշտ փոփոխություններ, որոնք, թարգմանչի խոսքով, «չէին համապատասխանում այն ավանդությանը, որ կապված է պարսից մեծ բանաստեղծի կենսագրության հետ»:

Բաֆֆու այս թարգմանությունը 1891 թ. տպագրվել է գրողի «Վեպիկներ և պատկերներ» խորագրով ժողովածուի առաջին հատորում, «Պարսկական պատկերներ» ժողովածուում (Վիեննա, 1913 թ.):

Նոր ժամանակներում այն տպագրվել է Բաֆֆու տասնհատորյա ժողովածուի առաջին հատորում (Երևան, 1957 թ.) և այնուհետև՝ Բաֆֆու տասներկու հատորով երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորում (Երևան, 1983 թ.):

1884 թ. «Աղբիւր» ամսագիրը տպագրում է (№ 10) գերմանացի բանաստեղծ Հայնրիխ Հայնեի (1797-1856) «Der Dicher Firdusi» պոեմի Բաֆֆու թարգմանությունը: Պոեմը թարգմանվել է ռուսերենից:

Ուշագրավ է, որ գերմանացի մեծ բանաստեղծի նույն պոեմը թարգմանել է նաև գրող Ղազարոս Աղայանը (1840-

1911): Թարգմանությունը առաջին անգամ տպագրվել է Բաֆ-  
ֆու թարգմանությունից վեց տարի հետո՝ 1890 թ., հեղինակի  
«Բանաստեղծություններ» վերնագրված հատորում, «Ֆրեդով-  
սի» խորագրով: Հետագայում այն քանիցս տպագրվել է Ադա-  
յանի տարբեր ժողովածուներում, ինչպես նաև գրողի երկերի  
բազմահատոր հրատարակություններում<sup>5</sup>:

1889 թ. Թիֆլիսում լույս է տեսնում «Ֆիրդուսի (Աբուլ Կա-  
սիմ Մանսուր). Արևելյան վիպաշխարհը» գրքույկը, որը բո-  
վանդակում է պարսիկ բանաստեղծի «Ռուստեմ և Ջոհրապ»-ի  
թարգմանությունը: Անունների տառադարձությունը թարգմա-  
նիչինն է՝ Փիլիպպոս Վարդանյանինը (1842-1916): Վերջինս  
գերմաներենից կատարված արձակ, ազատ թարգմանություն  
է: Գրքույկը հրատարակել է «Ադրիւր» ամսագիրը: Վստա-  
հաբար կարելի է ասել, որ այս թարգմանությունը կատարվել է  
Բաֆֆու թարգմանությունների բարերար ազդեցությամբ:

Հաջորդ հայ հեղինակը, որ դիմել է Ֆիրդուսու «Շահնա-  
մեի» թարգմանությանը, մշակութային, կրթական և գրական  
հայտնի գործիչ Սամուել Գյուլզադյանցն է (1830-1912): Ս.  
Գյուլզադյանցը ծնվել է Նոր Ջուղայում, կրթությունը ստացել է  
Կ. Պոլսում: Այնուհետև նա վերադարձել է Պարսկաստան և  
նշանակվել թագաժառանգի դաստիարակ: Սա նշանակում է,  
որ նա ճանաչված է եղել որպես մանկավարժական մեծ ունա-  
կություններով և հմտությամբ օժտված գործիչ և փայլուն տի-  
րապետել է պարսկերենին: Այս հատկություններն էլ հիմնա-

---

<sup>5</sup> **Ղազարոս Ադայան**, Երկերի ժողովածու, չորս հատորով, հատոր երրորդ,  
Երևան, 1962, էջ 435-440:

վորել են պարսկական արքունիքի հարգանքն ու վստահությունը նրա հանդեպ:

Հայկական հինավուրց Շուշի քաղաքը եղել է հայ գրի և մշակույթի կարևորագույն կենտրոններից մեկը: Հայոց բնաշխարհում երկրորդ տպարանը, Էջմիածնից հետո, հիմնվել է Շուշիում 1827 թ.: 1890-ական թթ. Շուշիում արդեն գործում էր երեք տպարան: Ուստի պատահական չէ, որ Շուշիում առանձնակի վերաբերմունք են դրսևորել պարսկական գրականության հանդեպ:

1893 թ. Շուշիում լույս է տեսնում Սամուել Գյուլգաղյանցի առաջին թարգմանությունը՝ «Ֆիրդուսի. «Ռուստամ և Սոհրաբ», ամբողջական վեպ և զանազան հատվածներ Շահնամայից» խորագրով: Սա չափածո թարգմանություն է բնագրից: Թարգմանիչն իր թարգմանածը կոչել է «Ամբողջական վեպ»՝ նկատի ունենալով հատվածի ամբողջականությունը: Գիրքը 150 էջ է:

1894 թ. Շուշիում լույս է տեսնում նրա մեկ այլ թարգմանությունը՝ «Ֆիրդուսի. Ջոհակ. Բիււրասայի Աժդահակ»<sup>6</sup> խորագրով: Թարգմանությունը կատարվել է շատ ավելի վաղ. Թիֆլիսի գրաքննիչը գիրքը տպագրության է արտոնել միայն 1893 թ. նոյեմբերին:

Ս. Գյուլգաղյանցը, իր վկայությամբ, «Շահնամե»-ից թարգմանել է 15000 տող, վեց ամբողջական հատված:

Իր այս թարգմանությունը նա համեմատել է բնագրի չորս հնագույն օրինակների հետ, ընդ որում՝ մեկը՝ գրչագիր, մյուսը՝

---

<sup>6</sup> **Ֆիրդուսի**, Ջոհակ Բիւրասայի Աժդահակ, թարգմանեց բնագիր պարսկերենից Սամուել Գիւլգաղեանց, Շուշի, տպարան Միլիջան Սահտեսի Յակոբեանց, 1894:

տպված: Տպագիրը ստեղծվել է 17 ձեռագրի քննական համեմատությամբ: Թարգմանությունը չափածո է՝ 15-վանկանի բանաստղերով: Կից երկտողում թարգմանիչը հաղորդում է, որ ինքը տպագրության է պատրաստում Ֆիրդուսու ընդարձակ կենսագրությունը: Ցավոք, հայտնի չէ, նա ավարտե՞լ է այդ աշխատությունը, թե՞ ոչ:

Թարգմանիչը սկզբում գետեղել է Ֆիրդուսու մեկ սուր քառատողը՝ ուղղված Շահ-Մահմուդին:

Մամուել Գյուլզադյանցի հաջորդ թարգմանությունը «Միավուշ»-ն է (143 էջ): Այս գիրքը նույնպես տպագրվել է Շուշիում, 1894 թ.: Թիֆլիսի գրաքննիչը գիրքը տպագրության է արտոնել նույն թվականին: Սա արձակ թարգմանություն է՝ օժտված տասնյակ կարևոր տողատակային ծանոթագրություններով, որոնք օգնում են ավելի ճիշտ հասկանալու պոեմում արտացոլված ժողովրդական բանահյուսական նյութերի, պարսկական իրական կյանքի ու կենցաղի բազմաթիվ իրողություններ: Տեքստից առաջ թարգմանիչը բերում է Ֆիրդուսուց վեց տող (երեք բեյթ): Դրանք Ֆիրդուսու ինքնակենսագրական տողերից են, որոնք արտացոլում են Մահմուդ Շահի անարդար վերաբերմունքը բանաստեղծի հանդեպ: Դրան հաջորդում է չափածո ևս չորս տող, իրականում երկտող է՝ բեյթ, բայց բերված է չորս տողի տեսքով և որ նույնպես խոսում է Ֆիրդուսու հանդեպ եղած անարդար վերաբերմունքի մասին: Ահա այդ քառատողը.

*Անցաւ Շահի ամէն փառքը,  
Միայն այս մէկ խօսք մնաց  
Թէ՛ Ֆրդուսու գին ու յարգը  
Շահը վերջում չգիտաց:*

Այս վերջին տողերի տակ գրված է՝ «Կենսագիր»: Ո՞վ է այդ կենսագիրը՝ հայտնի չէ:

1894 թ. բանասեր և թարգմանիչ Գևորգ Ասատուրը (1863-1937) «Մուրճ» ամսագրում ընդարձակ գրախոսություն է տպագրում Ս. Գյուլզադյանի թարգմանությունների մասին<sup>7</sup>: Հոդվածը ստորագրված է «Գ. Աստ.»: Իր հոդվածում հեղինակն արժևորում է Ս. Գյուլզադյանի թարգմանությունները և անում է ուշագրավ դիտողություններ:

Երեք տասնամյակ անց Գևորգ Ասատուրն ինքն է ձեռնարկում «Շահնամեն» թարգմանելու գործը: 1924 թ. Երևանում, «Նորք» գրական-գեղարվեստական հանդեսում տպագրվում է «Շահնամեից» մի հատված՝ իր թարգմանությամբ: Հատվածը խորագրված է «Բեժան և Մանիժա»: Իր այս թարգմանությանը Ասատուրը կցել է հետևյալ ծանոթագրությունը.

«Աբուլ Ղասիմ Թուսին, մականունով Ֆիրդուսին, Պարսկաստանի ամենամեծ էպիկ բանաստեղծը, ապրել է 925-1020 թ...»:

«Շահ-Նամեի» բարձր գեղարվեստական էպիզոդ-վեպերից մեկն է «Բեժանի և Մանիժայի» դաստանը, որի նախերգանքի թարգմանությունը տալիս ենք այստեղ»:

Տասը տարի անց՝ 1934-ին, Գ. Ասատուրի թարգմանությամբ Երևանում լույս է տեսնում «Ռուստամ և Սոհրաբ»-ը: Այդ հրատարակության մասին կխոսենք մի փոքր ավելի ուշ:

20-րդ դարի սկզբին հայ գրականության մեջ նոր հետաքրքրություն է առաջանում Ֆիրդուսու և իր «Շահնամեի»

---

<sup>7</sup> «Մուրճ» (քաղաքական, հասարակական, գրական ամսագիր), Թիֆլիս, 1894, №5 (մայիս):

հանդեպ: Ֆիրդուսուն նվիրված ուշագրավ աշխատություններից մեկը բանասեր, արվեստաբան, հոգևորական նշանավոր գործիչ Գարեգին Հովսեփյանի (1867-1952) «Հայ-իրանական վեպ Ռոստամ Զալ. ժողովրդական վեպ. տեքստը և ուսումնասիրություն» աշխատությունն է: Այն տպագրվել է «Ազգագրական հանդես»-ում (Թիֆլիս, գիրք 8-9, 1901-1902):

Հետաքրքրական է, որ Ֆիրդուսու «Շահնամեն» իր փոխակերպում-վերամարմնավորումն է ունեցել հայ ժողովրդական բանահյուսության մեջ: Մեր ժողովուրդը բանավոր պատմել է պարսկական հերոսական վեպը: Դրանք արձանագրել և պահպանել են հայ ազգագրագետներն ու բանահավաքները:

Այսպես, բանահավաք Բագրատ Խալաթյանցը (1860-1930) 1901 թ. Փարիզում (տպագրություն «Արաքսի») հրատարակել է «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ. ա. Առաջաբան, բ. Նյութ, Վանա, Կողպա և Ապարանի բարբառներով»: Գրքի առաջաբանը բաղկացած է երեք մասից՝ ա) հայ և պարսիկ հերոսներ, բ) «Արքայից գրքի» գրական մշակումը և գ) «Շահնամեի» համառոտ բովանդակությունը: Գրքի երկրորդ՝ բուն մասը, որը հեղինակը կոչել է «Նյութ», պարունակում է «Շահնամեի» բանահյուսական չորս տարբերակ.

1. Բուրզի—պատմել է Ապարանի Թաքարի գյուղի բնակիչ Բարսեղ Հարությունյանը:

2. Ռոստամ—պատմել է Վանի Չիբուխլու գյուղացի Վարդան Գալստյանը Էջմիածնում:

3. Ռըստամի Զալ—պատմել է Ապարանի Չամրլու գյուղացի Մուրադ Մխիթարյանը:

4. Ռուստամ—քրդերեն տարբերակ, պատմել է Մուրմալուի Քարվանսարա գյուղացի եզդի Փիր Կակոն:

Բանասեր, բանահավաք և մշակութային գործիչ Սարգիս Հայկունին (Ղազարյան, 1838-1902) 1903 թ. «Էմինյան ազգագրական ժողովածու»-ում (Մոսկվա) հրատարակում է «Շահնամեի» երկու տեքստ Մոկաց և Քաջբերունյաց Արծկեի Առընկույս գյուղի բարբառով:

1906 թ. անվանի բանասեր և ազգագրագետ Երվանդ Լալայանը (1870-1933) «Ազգագրական հանդես»-ում (№ 2, գիրք 14) հրատարակել է «Ռուստամ Զալ»-ի մի տարբերակ Նոր Բայազետի բարբառով:

Հաջորդ հեղինակը, որը անդրադարձել է Ֆիրդուսու հանձարեղ ստեղծագործությանը, բանասեր և թարգմանիչ Հարություն Թիրյաքյանն է (1845-1919): Նա ծնվել է Թալասում (Կեսարիա)<sup>8</sup>: Բարձրագույն կրթությունը ստացել է Փարիզում, հետևել է բժշկական ասպարեզին և ստացել գիտական աստիճան: 1896 թ. մեկնել է Պարսկաստան, որտեղ ապրել է տասը տարի, եղել է շահի կանանոցի բժշկապետը, ստացել է խանի տիտղոս: Պարսկաստանում էլ լրջորեն նվիրվել է պահլավերենի ուսումնասիրությանը, կատարել թարգմանություններ պահլավերենից: Առանձնապես զբաղվել է «Շահնամե» պոեմի թարգմանությամբ: 1906 թ. նրա թարգմանությամբ հրատարակվում է «Արտաշիր Բաբական. Կարնամակ» գիրքը (135 էջ): Ուշագրավ է, որ գրքի տիտղոսաթերթի վրա տպագրված է «1906», իսկ կազմին՝ «1907»: Հավանաբար գիրքը տպագրվել է ավելի վաղ՝ 1906-ին, կազմը՝ ավելի ուշ:

---

<sup>8</sup> Թալասը նշանավոր բանաստեղծ Վահան Թեքեյանի ծնողների ծննդավայրն է: Տվյալներ կան, որ Թեքեյանների գերդաստանը պարսկական Համադանից տեղափոխված նախնիների շարունակությունն է: Շատ հավանական է, որ Թիրյաքյանը նույն գերդաստանից եղած լինի՝ մի փոքր ազգանունը այլափոխված - Գ. Մ.:

Հ. Թիրյաքյանի թարգմանությունն ունի ընդարձակ «Ներածություն» (էջ Ե-ԻԱ), որի մեջ ներկայացված են իր թարգմանական գործի սկզբունքները: Բուն թարգմանությունը կազմում է 36 էջ (էջ 3-39): Թարգմանությունը խորագրված է տիտղոսաթերթից տարբեր ձևով՝ «Կարնամակ Արտաշիր Բարականի»: Գրքի մնացյալ առավել ծավալուն հատվածը՝ 37-135 էջերը, կազմում են թարգմանչի ընդարձակ և մանրամասն «Ծանոթություն»-ը:

Այս ծանոթագրությունները փաստորեն ներկայացնում են «Կարնամակի» բնագրի մանրամասն և հանգամանալից քննությունը: Ծանոթագրություններում ուղղակի կամ անուղղակիորեն արծարծված են պարսկական գրավոր հին մշակույթի գրեթե բոլոր կարևոր հարցերը, ներկայացված են հիմնական աղբյուրները և պատմական, մշակութային, ազգագրական բազմաթիվ իրողություններ:

1909 թ. Հ. Թիրյաքյանը Նյու Յորքում հրատարակել է ևս մի թարգմանություն Ֆիրդուսուց: Գիրքը խորագրված է «Շահնամակ Ֆիրդուսիի»: Ունի ենթախորագիր՝ «Դրվագ Արտաշիր Բարականի-ի»: Թարգմանությունը չափածո է և կազմում է 1976 տասնմեկ վանկանի տող: Թարգմանիչը ջանացել է հարազատ մնալ բնագրին: Գիրքն ունի ընծայական, ձոնված է Ամենայն Հայոց Կաթողիկոս, նորոգ հանգուցյալ Մկրտիչ Ա Վանեցուն՝ Մկրտիչ Խրիմյանին, «Հայոց քերթող-բանաստեղծ Հայրիկին»: Բանն այն է, որ ժամանակին նա է հորդորել Հ. Թիրյաքյանին գրադվելու պարսկական դասական գրականության թարգմանությամբ:

Գրքի «Յառաջաբան»-ում թարգմանիչը խոսում է պարսից պատմության ու հնագույն մշակույթի, ժողովրդական բանա-

հյուսույթյան, գրավոր հնագույն հուշարձանների, Ֆիրդուսու կյանքի և նրա «Շահնամե» երկի մասին:

Ի դեպ, Հ. Թիրյաքյանի այս թարգմանությունը ժամանակին բարձր է գնահատել հայ մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանը (1884-1915): 1906 թ. հայ նշանավոր գրող, գրական-հասարակական գործիչ Արշակ Չոպանյանին (1872-1954) ուղղված իր մի նամակում Վարուժանը գրում է. «Պ. Հ. Թիրյաքյանի «Շահնամեի» այս մեկ կտորին թարգմանությունը ներդաշնակ գտա, բայց քիչ մը շատ գրաբարախառն և թույլ լեզվով. բայց պետք չէ մոռանալ, որ արևելյան լեզուներեն թարգմանելը ավելի դժվար է արևմտյանն: Եթե հիշյալ պարոնը «Շահնամեն» ամբողջապես թարգմանե՝ քիչ մավելի ջղուտ և մաքուր լեզվով՝ իրավցե պատվաբեր և անմահանալի գործ մը արտադրած պիտի ըլլա»<sup>9</sup>:

Ֆիրդուսու կյանքին անդրադարձել է նաև հայ անվանի մանկագիր Աթաբեկ Խնկոյանը (Խնկո-Ապեր, 1870-1935): 1912 թ. «Աղբիւր» ամսագիրը հրատարակել է նրա մի գրքույկը, որը խորագրված է «Ֆիրդուսի-935-1020. Պատկերներ նրա կյանքից»: Այս գրքույկում Աթ. Խնկոյանը պարզ լեզվով պատմում է Ֆիրդուսու կյանքը՝ նշելով պարսիկ բանաստեղծի անձի շուրջ եղած ավանդություններից մի քանիսը: Իր պատմությունը նա ընդմիջում է «Շահնամե»-ից մեջբերումներով ու քաղվածքներով՝ հիմնականում մեջբերելով Ս. Գյուլզադյանցի չափածո թարգմանությունները:

---

<sup>9</sup> Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր երրորդ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, էջ 274:

Պարսկական գրականության և մշակույթի հանդեպ առանձնակի սեր և ակնածանք է ունեցել մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը (1869-1923): 1914 թ. գրված «Պետք է լսել» խորագրով հոդվածը դրա լավագույն վկայություններից մեկն է<sup>10</sup>: Ահա թե ինչ է գրում հայ բանաստեղծը պարսից դասական գրականության մասին.

«Էն ժամանակ, երբ Արևելքից ու Պարսկաստանից ենք խոսում, Ֆիրդուսու, Հաֆիզի, Սաադի<ի>, Օմար Խայամի, Նիզամիի և նման հսկաների վրա ենք զրույց անում, մեր առջև հայտնվում են Ս. Օգանեզաշվիլին իր մելամաղձոտ քյամանչով, արևելյան մաքուր ու հարազատ երաժշտությունով, եթերային նվագով և մի վեհ ու վսեմ ներդաշնակությամբ իրար են խառնվում, իրար լրացնում ու իրար բաց անում Չարգյահն ու Ֆիրդուսին, Հաֆիզն ու Ռասուրը, Մահուրին ու Օմար Խայամը...

Գերազանցորեն շքեղ ու շոայլ մի հոգեկան վայելք ամեն մի արևելցու համար»:

Նույն սիրով ու հիացմունքով է խոսում Թումանյանը պարսից գրականության և մշակույթի մասին «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածում<sup>11</sup>:

Իր նշանավոր «Թմկաբերդի առումը» (1902-1904) պոեմում ժողովրդական գուսանը՝ թափառական աշուղը, իբրև մեծագույն իմաստունի և պերճախոս բանաստեղծի, վկայակոչում է Ֆիրդուսին.

---

<sup>10</sup> **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, տասը հատորով, հատոր յոթերորդ, Երևան, 1995, էջ 140-142:

<sup>11</sup> **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, տասը հատորով, հատոր յոթերորդ, Երևան, 1995, էջ 232-244:

*Էսպես է ասել հընուց էդ մասին  
Տարսի բըլբուլը, անմահ Ֆիրդուսին...*

1934 թ. քաղաքակիրթ աշխարհը տոնում է պարսիկ մեծ բանաստեղծի ծննդյան 1000-ամյակը: Եվրոպական մեծ քաղաքներում Ֆիրդուսու հոբելյանը նշվում է մեծ շուքով: Փարիզի Ազգային գրադարանում բացվում է Ֆիրդուսուն և իր «Շահնամե»-ին նվիրված մեծ ու հարուստ ցուցահանդես: Պարսիկ ժողովուրդը 1934-1936 թթ.-ին՝ ամբողջ երկու տարի, մեծ շուքով նշում է իր հանճարեղ գավակի հոբելյանը: Եվ իհարկե, Պարսկաստանի հայ մտավորականությունը չէր կարող անմասն մնալ այդ մեծ իրադարձությունից: Հայ գրողներն ու թարգմանիչները նույնպես, ամեն մեկը յուրովի, մասնակցում են այդ մեծ իրադարձությանը:

Այդ հայ մտավորականներից մեկը թարգմանիչ և պետական գործիչ Հովսեփ Միրզայանցն է (1866-1935): Նա ծնվել է Համադանում, կրթությունը ստացել Նոր Ջուղայում և Թեհրանում: Տիրապետել է հայերեն, պարսկերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներին: Երիտասարդ տարիներից մինչև կյանքի վերջը վարել է պետական կարևոր պաշտոններ, մի քանի անգամ ընտրվել է Իրանի մեջլիսի պատգամավոր (1910 թ., 1915 թ., 1923 թ.): Պետական գործունեությանը զուգահեռ միշտ էլ զբաղվել է գրական-թարգմանչական աշխատանքով: Նա անգլերեն բնագրից թարգմանել է Բայրոնի, Վալտեր Սքոթի, Լոնգֆելլոյի երկերը, բնագրից թարգմանել է նաև Օմար Խայամի «Ռուբայաթը»:

1934 թ. Հ. Միրզայանցը հրապարակում է Ֆիրդուսու «Շահնամեի» թարգմանության հետ կապված երկու գիրք, ավելի ճիշտ՝ մեկ գրքույկ և մեկ գիրք:

Ոչ մեծածավալ գրքույկը խորագրված է «Ֆիրդուսի. Շահնամ (կտորներ)»: Տիտղոսաթերթի վրա նշված է.

1. Ռոստամ և Սոհրաբ
  2. Ռոստամ և Աշքաբուս
  3. Ռոստամ և Էսֆանդիյար
- Թարգմանեց Հ. Զ. Միրզայան

1934 հոկտեմբեր:

Գրքույկն ունի առաջաբան, որտեղ հեղինակը պատմում է Ֆիրդուսու՝ իր թարգմանության ձեռնարկման մասին և հայտնում, որ թարգմանել է մեծ բանաստեղծի հոբելյանի թելադրանքով: Առաջաբանի և բուն թարգմանությունների միջև անհամաձայնություններ կան: Գրքույկում առաջինը տպագրված է տիտղոսաթերթին նշված երրորդը՝ «Ռոստամ և Էսֆանդիյար»-ը, հետո առաջինը՝ «Ռոստամ և Սոհրաբ», իսկ երկրորդը բնավ չկա: Իրականում սրանք այդ հատվածների բովանդակության մի քանի էջանոց վերապատումներ են:

Նույն տարում Հովսեփ Միրզայանցը հրապարակում է իր թարգմանությամբ ավելի ծավալուն մի գիրք՝ նույն խորագրով՝ «Ֆիրդուսի. Շահնամ (կտորներ)»: Գրքի կազմի և տիտղոսաթերթին պահել է նույն համարակալված թվարկումը՝

1. Ռոստամ և Սոհրաբ
2. Ռոստամ և Աշքաբուս
3. Ռոստամ և Էսֆանդեար:

Թարգմանիչը պահել է նախորդ գրքույկի փոքրիկ առաջաբանն ու մեկ էջանոց ուղեկցող տեքստը: Դրանցից հետո նա արձակ մի քանի էջով ներկայացնում է «Ռոստամ և Էսֆանդեար»-ի համառոտ պատմությունը: Դրան հաջորդում է «Ռոստամ և Սոհրաբ»-ի իր թարգմանությունը, ապա՝ «Ռոստամի և

Աշքարուսի մենամարտը» և հետո՝ «Ռոստամ և Էսֆանդեարի պատմության վերջին մասը»:

Ֆիրդուսու հազարամյակի տոնակատարության օրերին Թեհրանում հրատարակված հաջորդ նշանակալից գործը իրանագետ, լեզվաբան, թարգմանիչ Ռուբեն Աբրահամյանի (1881-1951) «Ֆիրդուսի և իր Շահնամեն» աշխատությունն է (160 էջ), որը տպագրվել է 1934 թ.: Ռ. Աբրահամյանը ստացել է փայլուն կրթություն: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանը, Երևանի արական գիմնազիան: Բարձրագույն կրթությունը ստացել է Կիևի, Լայպցիգի, Սանկտ Պետերբուրգի համալսարաններում: 1921-1946 թթ. ապրել է Իրանում, զբաղվել մանկավարժական աշխատանքով: 1935 թ. Թեհրանի համալսարանում նա հիմնադրել է հին պարսկերենի և պահլավերենի ամբիոն:

Ռուբեն Աբրահամյանի աշխատությունը փոքրիկ նախաբանում ներկայացնում է պարսկերեն բառերի տառադարձության իր սկզբունքները: Աշխատությունն ունի երկու բաժին: Առաջինը վերնագրված է «Ֆիրդուսու դարը»: Այդ բաժնում իրանագետը խոսում է Ֆիրդուսու նախորդների, ժամանակակիցների մասին և տալիս է պարսկական հանճարի համառոտ կենսագրությունը:

Առավել ընդարձակ է երկրորդ բաժինը, որ վերնագրված է «Շահնամե»: Այս բաժնում գիտնականը հիմնավոր վերլուծության է ենթարկում պարսից մեծ բանաստեղծի երկը, նախ քննում «Շահնամեի» չափը, կառուցվածքը, աղբյուրները, ապա ներկայացնում «Շահնամեի» բովանդակությունը: Այնուհետև նա անցնում է «Շահնամեի» գրական, գեղարվեստական, պատմամշակութային հարցերի քննությանը՝ առանձնակի

ուշադրություն դարձնելով երկի գեղարվեստին: Հեղինակն արժարժում է գրական-բանասիրական տարաբնույթ հարցեր, կատարում բաղդատական վերլուծություն՝ ստեղծելով լուրջ և կարևոր գիտական աշխատանք:

Նույն՝ 1934 թ. Ռուբեն Աբրահամյանի թարգմանությամբ լույս է տեսնում ևս մի գրքույկ՝ «Բահրամ Գուր և Ազադէ» խորագրով, «Հատվածներ Շահնամեից» վերտառությամբ: Գրքույկն ունի «Ծանոթություններ» իբրև ծանոթագրություններ և «Բահրամ Գուրի» խորագրով արձակ շարադրանք, որտեղ թարգմանիչը ներկայացնում է Բահրամ Գուրի պատմական դիմանկարը:

Պարսիկ ազգային մեծ բանաստեղծի հազարամյա հոբելյանը մեծ շուքով է նշվում նաև Երևանում: Հայաստանի մայրաքաղաքում տեղի է ունեցել պարսիկ մեծ բանաստեղծին նվիրված շքեղ հանդես, որին ներկա է եղել պարսիկ կառավարության ներկայացուցիչ պրոֆեսոր Նաֆիսին, որը պարսիկ ժողովրդի անունից շնորհակալություն է հայտնել հայ ժողովրդի սրտաբուխ վերաբերմունքի համար: Երևանի պետական թատրոնում բացվել է մեծ ցուցահանդես, որը ներկայացրել է բանաստեղծի դարաշրջանը, Աքեմենյան և Սասանյան հարստությունների մշակույթի հնամյա նմուշներ, «Շահնամե»-ի երկու հին ձեռագիր, ինչպես նաև «Շահնամե»-ի հին և նոր հայերեն թարգմանություններ: Ֆիրդուսու հոբելյանն ուղեկցվում է մի շարք կարևոր հրապարակումներով, որոնց մեջ առանձնակի տեղ է գրավում «Ֆիրդուսի. Ռոստամ և Սոհրաբ. վեպ Շահնամեից» գիրքը: Այն լույս է տեսել 1934 թ.: Շրատարակության նախաձեռնողը եղել է նորագույն ժամանակների մեր մեծագույն բանաստեղծ Եղիշե Չարենցը (Եղիշե Սողոմոնյան, 1897-1937): Հենց նա էլ կազմակերպել է գրքի նկարա-

զարդում-ձևավորումը՝ այն հանձնարարելով մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանին (1880-1972): Բանն այն է, որ 1933 թ. Չարենցը դեռևս պետական հրատարակչության գեղարվեստական բաժնի վարիչն էր, և ինքն էր որոշում նման հարցերը: Մ. Սարյանը մանրամասնորեն գրանցել է «Ռոստամ և Սոհրաբ»-ի այդ հրատարակչության պատմությունը:

«Չարենցի հետ» իր հուշագրության մեջ Մ. Սարյանը պատմում է, թե Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչ բանաստեղծը ինչպես է պատվիրել պոեմի ձևավորումը. «Մի օր կանչեց իր մոտ: Ստա առանձնասենյակ: Թղթերի, ձեռագրերի ու թղթապանակների արանքից դուրս եկավ, մոտեցավ ու թե՛ «Գո՛րծ կա, նստիր»: Նստեցինք: Մի պահ լռեց: Հետո գուրգուրալից ժպիտով նայեց աչքերիս ու էլի լռեց: Եվ ի՞նչ էր խնդրածը:

- Գիտե՞ս ինչ,- ասաց,- Ֆիրդուսի ենք հրատարակում: Հայերե՛ն: Չհրատարակելու իրավունք չունենք: Մեր ժողովուրդը պետք է կարդա նրան: Էլ ինչ քաղաքակիրթ ազգ, որ ուրիշների ստեղծած լավը չիմանա: Պետք է, շա՛տ պետք է: Գիտեմ, որ ժամանակ չունես, նկարագարդումներ անել առանձնապես չես սիրում, բայց «Ռոստամ և Սոհրաբը» պիտի ձևավորես<sup>12</sup>:

Երևանյան այս հրատարակությունը գլուխգործոց է, հրատարակչական արվեստի մեծագույն երևույթ, որ կարող է դրվել եվրոպական լավագույն հրատարակչական նմուշների կողքին: Գրքի նկարագարդման-ձևավորման մասնագիտական խորապես գիտական և հմուտ քննությունը տրված է արվեստաբան Վիլիելմ Մաթևոսյանի (1931-2001) «Երեք կիսադեմ»

---

<sup>12</sup> **Մարտիրոս Սարյան**, Չարենցի հետ, «Սովետական արվեստ», 1967, № 9-10, էջ 9-10:

(Երևան, 2002 թ.) գրքում: Սարյանի իյուստրացիաները մեծ նկարչի բացառիկ վերաբերմունքի արտահայտությունն են Իրանի, նրա ժողովրդի, նրա մեծ մշակույթի և իր մեծ բանաստեղծի՝ Ֆիրդուսու հանդեպ: Ահա թե ինչ է գրում արվեստաբանը.

«Մատենական նկարչության գլուխգործոց է Արևելքի մեծ բանաստեղծ Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբ» պոեմի 1934 թ. հայերեն հրատարակությունը, որը զարմացնում է գրվածքի տեսողական փայլուն մարմնավորմամբ ու կատարման բացառիկ վարպետությամբ:

Հայ արվեստագետը փայլուն կերպով վերարտացուել է Ֆիրդուսու երկում ներկայացված աշխարհագրական, պատմա-սոցիալական միջավայրի, հերոսների անտրոպոլոգիական ու ցեղային-հոգեբանական հատկանիշների, նրանց ճաշակի ու բարոյական ըմբռնումների բնորոշ և ամենացայտուն գծերը: Իյուստրացիաներում ապշեցուցիչ համոզությամբ է տրված պոեմում նկարագրվող արիստոկրատական-ասպետական կենցաղը՝ արևելյան իր ողջ յուրահատկությամբ, բարբարոս-բռնատիրական ու վայելչագեղ-ցուցադրական միաժամանակ»<sup>13</sup>:

Գիրքը բացվում է հայերեն և պարսկերեն ընծայականով՝ «Մեծ բանաստեղծի՝ Ֆիրդուսու ծննդյան հազարամյակին»:

Թարգմանության սկզբում՝ բուն գրքից (թարգմանություն-նից) և տիտղոսաթերթից առաջ, առանձին էջի վրա, առանց էջի համարակալման, դրված է Ֆիրդուսու ինքնաբնութագրական ութ տողը՝ «Ֆիրդուսի. Շահ-Նամեից» հղումով:

---

<sup>13</sup> Վիլհելմ Մաթևոսյան, Երեք կիսադեմ, Երևան, «Սարգիս Խաչենց», 2002, էջ 60:

«Ինձանից ծեր ու դեռահաս շատն է մըտել մահվան քուն.  
Ես ևս չեմ միշտ մընալու այսպես անքուն և արթուն...  
Բայց կերտելով այս հուշարձանն անգուգական-գրբական,  
Ես հիմք դրրի երկրի վըրա խոսքի ուժին մշտական:  
Այսուհետև ես չեմ մեռնի-միշտ կմընամ կենդանի,  
Որովհետև ես ցանեցի սերմը խոսքի հայրենի:  
Եվ ամեն մարդ, ով որ ունի ինչք ու հոգի, նա կասի  
Եվ իմ մահից դարեր հետո՝ «Կեցցե՛ս, անմահ Ֆիրդուսի»<sup>14</sup>:

«Ռոստամ և Սոհրաբ»-ի այս թարգմանությունն ունի 24 վերնագրված գլուխ: Գրքի վերջում տրված են նաև «Բեժան և Մանիժե» դաստանի նախերգանքը և «Երգիծանքը» («Մահմուդ-շահի դեմ»):

Գրքի խմբագիրը Եղիշե Չարենցն է:

1934 թ. Երևանում լույս է տեսնում Ֆիրդուսու ծննդյան հազարամյակին նվիրված գիտական հոդվածների և ուսումնասիրությունների արժեքավոր մի ժողովածու: Գրքի «Առաջաբանում», որ ստորագրել է «ՀՄԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտը», շատ հստակ ձևակերպված է և՛ մեր ժողովրդի դարավոր վերաբերմունքը հարևան պարսիկ ժողովրդի, իր մշակույթի և իր մեծ բանաստեղծի հանդեպ, և՛ գիտական ժողովածուի մեջ ընդգրկված նյութերի գիտական, իմացական և բարոյական մեկնակետը: «Ֆիրդուսին պատկանում է նաև մեզ՝ հայերիս: Ինքը՝ հանձարեղ բանաստեղծը, նրա «Շահ-Նամե»-ն ու «Երգիծանքը», նրա կերտած հերոսներն

---

<sup>14</sup> **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, վեց հատորով, հատոր չորրորդ, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1966:

ու տիպերը հանրաձանոթ են հայ ընթերցողին, սիրված են և հարազատացած հայ աշխատավոր գյուղացու միջավայրում»:

Գրքի առաջին նյութը անվանի հայագետ, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի (1893-1970) «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-ում և հայ մատենագրության մեջ» ծանրակշիռ ու մեծարժեք ուսումնասիրությունն է: Կարելի է ասել, որ խորագետ հայագետը այդ աշխատանքով տվել է հարցի գրեթե լիակատար պատասխանը:

Դրան հաջորդում է հայագիտության անգերազանցելի հսկայի՝ պրոֆեսոր Մանուկ Աբեղյանի «Շահնամա»-ի ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» հոդվածը, որտեղ հայ տաղաչափության մեծագույն գիտակը ցույց է տվել «Շահնամե»-ի բանաստեղծական չափի՝ 11 վանկանի (6+5) բանատողի առկայությունը հայ բանաստեղծության մեջ հնագույն ժամանակներից մինչև Եղիշե Չարենցի պոեզիան:

Հաջորդ նյութը բանասեր, արվեստաբան, խմբագիր Գարեգին Լևոնյանի (1872-1947) «Ֆիրդուսին հայ գրականության մեջ» մատենագիտական ընդարձակ տեղեկանքն է, որը, հասկանալի է, ներկայացնում է հարցի պատմությունը մինչև 1934 թ.: Լևոնյանի կազմած մատենագիտությունը թեև կարիք ունի լրացումների, սակայն, միևնույնն է, շատ արժեքավոր է և առաջին անգամ համակողմանի պատկերացում է տալիս առաջադրված հարցի մասին:

Ժողովածուի մեջ տպագրվել է շատ հետաքրքրական մի նյութ՝ «Ռոստամ-Ջալ» խորագրով «հայ-իրանական ժողովրդական վեպ», որը Ռշտունիքի Նարեկ գյուղի բնակիչ, հոդագործ-այգեպան-բանջարաբույծ Պատուր Պողոսյանի բանավոր խոսքից գրի է առել նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի օգնական Արտաշես Բարսեղյանը: «Ռոստամ-Ջալ»-

ի այս պատումը գրի է առնվել 1915 թ. Ալեքսանդրապոլում: Հոդվածից պարզվում է, որ մեր ժողովրդական բանահյուսության մեջ պահպանվել է հայ-իրանական ժողովրդական վեպի 7 տարբերակ:

Հրապարակումը ուղեկցվում է մեծանուն հայագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանի բացատրական և վերլուծական սպառիչ առաջաբանով:

Ժողովածուն ունի նաև «Բառարան օտար և բարբառային դժվար հասկանալի բառերի ու քերականական ձևերի», ինչպես նաև «Ցանկ հատուկ անունների»: Գրքի վերջում ռուսերենով տրված է ընդգրկված նյութերի բովանդակությունը (11 էջ): Գիրքը կազմված և տպագրված է մեծ խնամքով ու ճաշակով: Գրքի տեխնիկական խմբագիրը հմուտ նկարիչ-ձևավորող Տաճատ Խաչվանքյանն է:

Վստահաբար կարելի է ասել, որ ժողովածուի հրատարակության ջատագովն ու խրախուսողը եղել է Եղիշե Չարենցը: Սարյանի ձևավորած «Ռոստամ և Սոհրաբ» գրքի և «Ֆիրդուսի» ժողովածուի հրատարակչական ընդհանրությունները ակնհայտ են: Եվ պատահական չէ, որ ժողովածուի «Առաջաբան»-ին իբրև բնաբան դրված են չափածո երկու քառատող Չարենցի երկերից՝ մեկ քառատող՝ «Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ N.N.-ին, գրված Երևանում» և մեկ ռուբայի (քառատող) Չարենցի «Ռուբայաթ»-ից՝ առանց աղբյուրները մատնանշելու:

Չենք կարող չնշել նաև, որ «Ֆիրդուսի» ժողովածուն պատրաստողներն ու հրատարակիչներն այն իրականացրել են Ֆիրդուսու մեծ գրականության և իրենց կատարած աշխատանքի բարձր գիտակցությամբ, որի առհավատյան են նաև ներքոհիշյալ տողերը.

«Տոգորված այն վառ գիտակցությամբ, որ ներկա ժողովածուն էլ մի դուզնաքյա նպաստ է հարուստ ֆիրդուսագիտության, Ինստիտուտը վստահ հրապարակում է այն:

Թո՛ղ այս ժողովածուն լինի պարսիկ և հայ ժողովուրդների անցյալի և ներկայի բարեկամական հարաբերությունները, կուլտուրական կապն ու մերձեցումն ամրապնդող օղակներից մեկը. թո՛ղ նա լինի մի համեստ պսակ այն հազարավոր պսակների մեջ, որոնք դրվելու են իր «Ժամանակի շնչով ապրող, իր «դարը» գեղարվեստորեն երգող, պարսիկ ժողովրդի և համայն մարդկության մեծագույն զավակներից մեկի, հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու հոյակերտ արձանի վրա»:

Նշանակալից է և այն, որ գրքի նյութերը ուղեկցվում են «Շահնամեում» պատկերված իրադարձությունները ներկայացնող պարսկական սքանչելի մանրանկարների վերատպություններով:

1939 թ. Խորհրդային Միությունում և, անշուշտ, առաջին հերթին՝ Հայաստանում, մեծ շուքով նշվեց հայ ազգային մեծ էպոսի՝ «Սասնա ծռեր»-ի հազարամյակը: Ամենևին սխալ չի լինի կարծել, որ հայ հերոսական էպոսի հազարամյակը համաժողովրդական շուքով և փայլով տոնելու գաղափարը ինչ-որ չափով ծնունդ է առել «Շահնամե»-ի հազարամյակի տոնակատարությունից:

Ասենք, որ Ֆիրդուսու գրական հետքը ազդեցություն է ունեցել 1920-30-ական թթ. հայաստանյան գրական կյանքի և ամենից առաջ մեր մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի գրականության վրա, և դա ոչ միայն գաղափարագեղարվեստական տեսակետով, այլև ստեղծագործական առումով:

Չարենցի նախնիները ապրել են Սալմաստում, ապա տեղափոխվել և հաստատվել են Մակու քաղաքում: 1886 թ. Չարենցի հայր Աբգար աղան իր ընտանիքը տարել է Կարս և բնակություն հաստատել այնտեղ: Չարենցը ծնվել է Կարսում 1897 թ. մարտի 13-ին: Թեև Չարենցը Իրանում չի ապրել, Իրանը չի տեսել, այնուամենայնիվ, հոգով միշտ կապված է եղել Իրանին, անգամ ունեցել է պարսկական անձնագիր: Ընտանիքում գորավոր է եղել պարսկահայերի ոգին, որի վերաբերյալ հաճախ է խոսել բանաստեղծը:

Չարենցը հրաշալի քաջատեղյակ էր համաշխարհային, ինչպես նաև պարսկական գրականությանն ու մշակույթին, որի վկայություններից մեկն էլ 1922 թ. գրված «Չարենց-Նամե» պոեմն է, որն ինքնակենսագրական հիմքեր ունի: Խորագիրն արդեն խոսում է Ֆիրդուսուն հետևելու մասին: Առաջին իսկ տողերում Չարենցը գրում է Իրանի հետ իր հոգևոր այդ կապերի մասին.

*Ես եկել եմ հեռո՛ւ Իրանից:  
Հայրենիքս է – Խանի Մակուն:  
Իմ հոգում – արև՛ն Իրանի,  
Իրանի արև՛ն է, իմ հոգում:*

Եվ ապա՝

*Ես ծնվել եմ Մակու քաղաքում,  
Արևի տակ ոսկեդե՛ն, հասուն,  
Շոգ շնչի տակ Որմուզդի թևի-*

*1897 թվին:*

*Թափել է արևն Իրանի  
Իմ հոգում Շիրազի վարդեր:<sup>15</sup>*

Այստեղ բանաստեղծի խոսքը փոխաբերական է. նա խոսում է, իհարկե, իր հոգևոր ծնունդի, իր հոգևոր նախասկզբի մասին, բայց անժխտելի է նաև, որ Իրանի, ասել է թե՛ Արևելքի, արևը՝ կյանքը, ոգին, այդ թվում՝ և մշակույթը, անանց էություն են եղել բանաստեղծի մեջ, որտեղ մեծ է եղել պարսիկ բանաստեղծների և առաջին հերթին Ֆիրդուսու դերը:

1924 թ. Չարենցը գրում է իր հայտնի «Ռուբայաթը»՝ 44 ռուբայի, և հրատարակում է առանձին գրքով: Այստեղ նույնպես ակներև է Ֆիրդուսու ազդեցությունը:

*Ասում են՝ վիթխարի հերոս,  
հանճարեղ է եղել Բսքյանդարը.  
Շարժել է, խառնել է իրար ազգեր  
ու ցեղեր Բսքյանդարը.  
Բայց գիտե՛ս դու շարժումն  
ու ընթացքը և գիտես՝ չլիներ թե ընթացքը-  
Աշխարհում և մի շյուղ անգամ  
դժվա՛ր թե շեղեր Բսքյանդարը:*

Բսքյանդար-Ալեքսանդր Մակեդոնացին Չարենցի «Ռուբայաթում» հայտնվել է վստահաբար «Շահնամե»-ից:

1933 թ. մայիսի առաջին օրերին Չարենցը ավարտում է իր բացառիկ գործերից մեկը՝ դանտեական շնչով համակված «Մահվան տեսիլ» պոեմը: Սա Ֆիրդուսու հազարամյակի տոնակատարության նախընթաց տարին էր: Պոեմը տպագրվում

---

<sup>15</sup> **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, չորս հատորով, հատոր առաջին, «Սովետական Գրող» հրատարակչություն, Երևան, 1986, էջ 411, 413:

է նույն տարում Չարենցի պոեմների և բանաստեղծությունների «Գիրք ճանապարհի» խորագրված նշանավոր հատորում:

Պոեմի նախերգանքում, որ բանաստեղծը վերնագրել է «Մուտք», Չարենցը հիշատակում է աշխարհի բոլոր ժամանակների երեք մեծագույն բանաստեղծներին՝ հույն մեծագույն քերթող Հոմերոսին (մ.թ.ա. 9-8-րդ դդ.), հռոմեացի բանաստեղծ Պուբլիուս Վերգիլիուս Մարոյին (մ.թ.ա. 70-19 թթ.) և Ֆիրդուսուն: Չարենցը մեծարանքի և փառաբանության բացառիկ խոսքերով է բնութագրում նրանց: Ահա թե ինչ է գրում Չարենցը պարսիկ հանճարեղ բանաստեղծի մասին.

*Եվ քե՛զ, արեգակնական հանճար, շոայլորեն փարթամ  
Ֆիրդուսի՛,  
Բազմաբղետ, ինչպես Արևելքը՝ գանձերով ու  
արկածներով հարուստ,  
Որ հանճարիդ այնքա՛ն անայլայլ և իմաստուն լույսով  
Ներբողել ես շահերի սխրությունները սին իբրև ուղի  
անմեռ, որ տրվում է վերուստ...<sup>16</sup>*

Ֆիրդուսու անմահ ստեղծագործության և առհասարակ պարսկական գրականության հանդեպ Չարենցի հետաքրքրությունը առանձնապես մեծանում է Ֆիրդուսու հազարամյակի նախապատրաստության օրերին: 1933-1934 թթ. նա գրում է ռուբայիների նոր շարք՝ 24 ռուբայի, իսկ 1934 թ. ապրիլին՝ իր «Բեյթերը» (ութ բեյթ): Դրանցից երկուսը հասցեագրված են Ֆիրդուսուն.

---

<sup>16</sup> **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, չորս հատորով, հատոր երրորդ, Երևան, 1987, էջ 49:

Դ.

*Ոսկեգոծել է բազում շահերի քո շահիրական ջանքը,  
Ֆիրդուսի՛,  
Բայց չեղա՛վ մի շահ, որ ոսկեգոծեր քո անօգնական  
կյանքը, Ֆիրդուսի՛:-*

Ե

*Շահնշահերի արշավանքների գովասանքը բորբ  
Չընօրհնեց ն՛չ քո մահը խեղճ, ն՛չ քո կյանքը որբ:*

1933 թ. գրված «Մահվան տեսիլ» պոեմում հայ բանաստեղծը, անդրաշխարհում իր երևակայական ճամփորդությունը «Մտածումի նավով» սկսելուց առաջ, դիմում է հին դարերի «Վսեմ քերթողահայրերին»՝ «Մտքի ու Հանճարի քերթության պետերին», «Ապագայով լեցուն աչքերը անցյալին հառած»՝ Չարենցը դիմում է Արևելքի և Արևմուտքի հանճարներին, հերոսների մահը երգած «Անհույզ ու մարմարյա» Հումբոլտին ու «Լատինական փառքի հոչակը ավետող դյուցազնական ու բարբարոս» Վիրգիլիոսին: Սակայն առավել ամբողջական ու բնութագրական է Չարենցի դիմումը «արեգնական հանճար», «շռայլորեն փարթամ» Ֆիրդուսուն:

Նշանավոր բանաստեղծ Գուրգեն Մահարին (Գուրգեն Աճեմյան, 1903-1969 թթ.) նույնպես արձագանքում է և մասնակից դառնում Ֆիրդուսու հազարամյակի տոնակատարությանը: 1934 թվականի հոկտեմբերի 6-ին նա «Խորհրդային Հայաստան» օրաթերթում տպագրում է «Երգեր Ֆիրդուսուն» ընդհանուր խորագրով չորս բանաստեղծություն՝ 1. «Ինչ էր քեզ համար», 2. «Իմաստությունը», 3. «Անմահություն» և 4.

«Ժող. նկարիչ Մ. Սարյանին՝ «Ռոստամ և Սոհրաբ»-ի մեծ նկարչին»:

Առաջին բանաստեղծության մեջ Մահարին համեմատում է Մահմուդ Շահին Ֆիրդուսու հետ և արդարորեն այն միտքն է հայտնում, որ շահերը ոչինչ են Ֆիրդուսու համեմատությամբ:

Երկրորդ բանաստեղծության մեջ Մահարին ներքին բանավեճ ունի Հովհաննես Թումանյանի հետ: Ավելի ճիշտ լրացնում է Թումանյանին: Թումանյանը Ֆիրդուսուն կոչել է «Ֆարսի բլբուլ»: Մահարին ասում է՝ այո՛, սոխակի ձայնով, բայց և մեծ իմաստությամբ:

Երրորդ բանաստեղծության մեջ Մահարին շեշտում է Ֆիրդուսու անմահությունը:

Չորրորդ բանաստեղծությունը գրված է «Ռոստամ և Սոհրաբ»-ի հայերեն անկրկնելի հրատարակության առթիվ: Ինչպես արդեն նշել ենք, գիրքը ձևավորել և նկարագարողել էր մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը:

Մի քանի օր անց՝ 1934 թ. հոկտեմբերի 10-ին, Գուրգեն Մահարին «Գրական թերթում» տպագրում է «Երգ Մահմուդ Շահի և քննադատի մասին» խորագրով բանաստեղծությունը: Բանաստեղծությունը հինգ քառատող է Ֆիրդուսուց առնված բնաբանով: Մահարին բանաստեղծությունը կառուցել է Մահմուդ Շահի զոջումի մասին պատմող ավանդության վրա:

1935 թ. Չարենցի նախաձեռնությամբ Գևորգ Ասատուրի թարգմանած «Ռոստամ և Սոհրաբ»-ը վերահրատարակվում է, այս անգամ «Պետհրատի էժանագին գրադարան» մատենաշարով (№ 63-34): Մա ավելի պարզ հրատարակություն է և գնի առումով եղել է շատ մատչելի: Տիտղոսաթերթին գրված է՝

«Թարգմանեց՝ Գևորգ Ասատուր

Խմբագրեց՝ Եղիշե Չարենց

Նկարագարդեց՝ Մարտիրոս Սարյան»:

Իբրև հավելված՝ տպագրված է «Երգիծանք Մահմուդ-Շահի դեմ» հայտնի հասվածք: Գրքի վերջում կա «Ցուցակ գրքույկի մեջ հանդիպած սակավ գործածական հայերեն բառերի»:

1934 թ. Հայաստանի կենտրոնական մամուլը Ֆիրդուսու հազարամյակի առիթով հրապարակել է մի շարք այլ նյութեր ևս:

Այսպես, «Խորհրդային Հայաստան» օրաթերթը 1934 թ. մայիսի 29-ին (№ 122) տպագրել է Հայնրիխ Հայնեի՝ Ֆիրդուսուն նվիրված հայտնի պոեմը Սողոմոն Տարոնցու (1905-1971) թարգմանությամբ: Տարոնցու թարգմանությունը խորագրված է «Պոետ Ֆիրդուսի»: 1934 թ. հունիսի 21-ին «Խորհրդային Հայաստանը» (№ 141) տպագրել է Տարոնցու մեկ այլ թարգմանությունը՝ «Ծաղր Սուլթան Մահմուդի մասին» խորագրով:

Հունիսի 30-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (№ 149) տպագրվում է անվանի հայագետ, 1919 թ.-ից Ռուսաստանի ակադեմիայի ակադեմիկոս Հովսեփ Օրբելու «Շահ-Նամե» (Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի առթիվ)՝ հոդվածը, ուր հեղինակը շեշտը դրել է Ֆիրդուսու և նրա երկերի գրական և գեղարվեստական առանձնահատկությունների վրա:

Նույն համարում «Խորհրդային Հայաստանը» տպագրել է Աս. Շահնազարյանի «Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի ձեռագրի մի օրինակը» բանասիրական հոդվածը: «Շահ-Նամեի» այդ ձեռագիրը գրված է 1245 թ. (տպագրվել է 1827 թ.) Մահմադ անունով մի խանի հրամանով:

1935 թվականին Կահիրեում (Եգիպտոս) հրատարակվող «Ցուսաբեր» չորս էջանոց օրաթերթը քսաներկու էջից բաղկացած բացառիկ համար է տպագրում՝ այն ամբողջությամբ նվիր-

րելով Ֆիրդուսուն և իր հազարամյակին: Թերթի էջերը մեծադիր են, և այն դրանով տարբերվել է սովորական թերթերից: Բացառիկ համարը լույս է տեսել հուլիսի 6-ին: Համարի բովանդակությունը շահեկանորեն լայն է և ընդարձակ: Այն ներկայացնում է Ֆիրդուսուն և նրա անմահ գործը, պարսիկ ժողովրդին, պարսկական արվեստն ու մշակույթը: Ի դեպ, համարը տպագրված է սովորականից տարբեր, սպիտակ, բարձրորակ թղթի վրա, որն արտակարգ երևույթ էր այն ժամանակների համար:

Համարը բացվում է մեկ ամբողջ էջ զբաղեցնող «Ֆիրդուսի» խորագիրը կրող խմբագրականով: Նույն՝ առաջին էջում տպագրված է Ֆիրդուսուն պատկերող մի քանդակի պատկերը, ինչպես նաև՝ Ֆիրդուսու՝ իրեն բնութագրող երկու բեյթը՝ պարսկերեն և հայերեն:

Համարի բուն նյութերից առաջ տպագրված է Ռեզա Շահ Փեհլևիի՝ Ֆիրդուսու հազարամյակի առիթով արտասանած ճառը, ինչպես նաև Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանի «Տոնին իմաստը» խորագրով խոսքը: Տպագրվել է նաև Ատրպատականի Հայոց թեմական առաջնորդի՝ Տեր-Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի «Ֆիրդուսին և Ռեզա Շահ Փեհլևին» ակնարկը:

Այնուհետև տպագրված են հայ գրականության ու մշակույթի նշանավոր դեմքերի հոդվածները և գրությունները՝ մեծանուն և մեծավաստակ Նիկոլ Աղբալյանի «Ֆիրդուսին և իր երգիծագիրը», «Մի դրվագ Ֆիրդուսու կյանքից» հոդվածները, ականավոր պատմաբան Կարապետ Բասմաջյանի «Շահնամեն և հայերը» հոդվածը, Բենիամին Թաշյանի «Ֆիրդուսին հայ գրականության մեջ» ընդարձակ հոդված-ուսումնասիրությունը, Հայր Սիմոն Երեմյանի «Պարսիկ Հոմերոսը» ծավալուն էս-

սեն, վաստակաշատ գրականագետ Արտաշես Աբեղյանի «Ֆիրդուսիի հազարամյակը Գերմանիայում» ընդարձակ քննությունը, Աշոտ Աբրահամյանի «Զրադաշտականության ջատագովությունը Դադիդիի մաս Շահնամում» քննական ուսումնասիրությունը, գրականագետ Գուրգեն Մխիթարյանի «Ֆիրդուսի. Նշմարներ կեանքին և գործին մասին» ընդարձակ հոդվածը, Վահե Արծրունու «Ֆիրդուսի. Կեանքը և գործը» հոդվածը և հայ հեղինակների այլ հոդվածներ և գրություններ:

Բացառիկ համարի էջերում առանձնակի տեղ ունեն նաև պարսիկ հեղինակները: Թերթը թարգմանաբար տպագրել է Միրզա Ալի Խան Դաշտիի «Ի՞նչ է արել Ֆիրդուսին Պարսկաստանի համար», Սաիդ Նաֆիսիի «Ֆիրդուսու մեծագույն հերոսը և հայկական դիւցաներգութիւնը», Ռաշիդե Եասեմի «Կինը Շահնամեի մեջ» հոդվածները, դոկ. Աբդուվահաբ Էզամիի բանախոսությունը՝ Ֆիրդուսու հազարամյակի տոնակատարության առթիվ: Թերթը տպագրել է նաև Աբդոլ Հոսեյն խան Օվրանգիի «Ֆիրդուսի» խորագրով ընդարձակ չափածո ու դրա հայերեն թարգմանությունը և այլ նյութեր: Թերթը տպագրել է նաև Բեռլինի համալսարանի պրոֆեսոր, Բեռլինի արևելյան լեզուների ճեմարանի տնօրեն, դոկտոր Հանս Հայնրիխ Շեդերի (Prof. Dr. Hans Heinrich Schaeder) կյանքն ու գործը ներկայացնող համառոտ ակնարկը, ինչպես նաև դոկ. Շեդերի «Ֆիրդուսին և իր Շահնամեն» հոդվածը:

Բացառիկ համարի էջերում տեղ են գտել Ֆիրդուսուն առնչվող, ինչպես նաև Պարսկաստանի պատմությունը, արվեստն ու մշակույթը ներկայացնող բազմաթիվ լուսանկարներ, «Շահնամեի» տարբեր հատվածների հայերեն թարգմանություններ և այլ նյութեր:

Տպագրված է նաև հայ նշանավոր նկարիչ Հովհաննես Շավարշի (1908-1980) ստեղծած «Ֆիրդոսի» դիմանկարը:

Կարելի է ասել, որ իր բացառիկ համարով, Ֆիրդուսու և պարսիկ ժողովրդի հանդեպ ունեցած այդ բացառիկ վերաբերմունքով «Յուսաբեր» թերթի խմբագրությունը դրսևորել, ամփոփել և ամբողջացրել է հայկական սփյուռքի, արտերկրի ողջ հայության սերն ու համակրանքը և ամենախորին հարգանքը պարսիկ մեծ բանաստեղծի և պարսիկ ժողովրդի հանդեպ:

Ի դեպ, Սփյուռքի տասնյակ այլ թերթեր և պարբերականներ նույնպես անդրադարձել են Ֆիրդուսու հազարամյակին: Նշենք դրանցից մի քանիսը՝ «Ազատ խոսք» (Բուլղարիա, Սոֆիա, 1934 թ., 17 և 19 նոյեմբերի), «Արմենիա» (Արգենտինա, Բուենոս Այրես, 1934 թ., 1 դեկտեմբերի), «Ալիք» (Իրան, Թեհրան, 1935 թ., 15 դեկտեմբերի) և այլն:

1934 թ.՝ Ֆիրդուսիի հազարամյակի տարում, բանաստեղծ Սողոմոն Տարոնցին (1905-1971) հրատարակում է բանաստեղծությունների, բալլադների, լեգենդների և թարգմանությունների իր «Դարերի լեգենդը» ժողովածուն: Նա գրքի մի բաժինը խորագրում է «Վարպետների հետ» և այնտեղ ընդգրկում է Ֆիրդուսի պոեմի իր թարգմանությունը, ինչպես նաև վեց ընդարձակ հատված «Շահնամեից»: Ահա այդ հատվածները.

1. Ծաղր Սուլթան Մահմուդի մասին (1934 թ.)
2. Ռոստամի Ռախշ ձին (1934 թ.)
3. Սոհրաբի Սամանդ ձին (1934 թ.)
4. Ռոստամի և Սոհրաբի առաջին մենամարտը (1933 թ.)
5. Ռոստամի և Սոհրաբի երկրորդ մենամարտը (1934 թ.)
6. Ռոստամի և Սոհրաբի երրորդ մենամարտը (1934 թ.):

Շուրջ երեք տասնամյակ անց Սողոմոն Տարոնցին նորից է դիմում «Շահնամե»-ի թարգմանությանը: Նա կազմում և հրատարակում է իր թարգմանությունների երկու հատորանոց ժողովածուն՝ «Հազար ու մի սիրտ» ընդհանուր խորագրով: Առաջին հատորը լույս է տեսել 1961 թ., երկրորդ հատորը՝ 1966 թ.:

Առաջին հատորում Սողոմոն Տարոնցին հրատարակել է «Բահրամ Գուռ և Ազադե» հատվածը, ինչպես նաև հայտնի երգիծանքը՝ նոր թարգմանությամբ՝ «Պարսավանք ընդդեմ Ղազնեֆցի Սուլթան Մահմուդի»:

Երկրորդ հատորում Տարոնցին զետեղել է հետևյալ հատվածները՝ «Ռոստամի և Սոհրաբի երրորդ մենամարտը, Սոհրաբի մահը», «Սոհրաբի գինու երգը» և «Բահրամ Գուռն ու գինին»:

1935 թ. Բրյուսելում գիտնական, նշանավոր պատմաբան և նույնքան նշանավոր հայագետ ու արևելագետ Նիկողայոս Ադոնցը (1871-1942) «Շահնամեի» հազարամյակի տոնակատարության առթիվ գրել է շատ ուշագրավ մի հոդված՝ «Շահնամեի քաղաքական ավանդը» խորագրով: Հոդվածը տպագրվել է «Յուսաբեր» քաղաքական, հասարակական և գրական օրաթերթերում (Կահիրե, 1935 թ., հուլիսի 6, № 81): Այն հրատարակվել է նաև Ն. Ադոնցի «Երկեր»-ի վեցհատորյակի երկրորդ հատորում (Երևան, 2006 թ.):

Ն. Ադոնցը բացառիկ դեր և նշանակություն է վերագրել մեծ բանաստեղծ Ֆիրդուսուն և իր «Շահնամե» երկին՝ գրելով. «Իր ամբողջության մեջ Շահնամեն կրում է Իրանի փառքը, հոշոտված, բայց հարության շունչը պահած»<sup>17</sup>: Ադոնցն իր

---

<sup>17</sup> Նիկողայոս Ադոնց, Երկեր, վեց հատորով, հատոր Բ, Երևան, 2006, էջ 490:

հողվածում քննական-վերլուծական հայացքով ներկայացնում է Իրանի մինչմահմեդական ժամանակն ու պատմությունը և նրա մեծ դերը «քաղաքակիրթ Արևելք»-ի կյանքի մեջ. «Իրանի պատմական երախտիքն է, որի հետ ժառանգելով Միջագետքի մեծ քաղաքակրթությունը ոչ միայն պահեց և ուռճացրեց իր ստացածը, այլև դարեր շարունակ պաշտպանեց իր և Առաջավոր Ասիայի խաղաղ աշխարհաշինությունը հեռավոր Արևելքից պարբերաբար խուժող վայրի ցեղերի ավերածությունների դեմ: Ինչ արժանիք ունենան արաբները, անպայման պատասխանատու են, որ տապալելով պարսից պետությունը, չկարողացան փոխարինել նրա պահապանի դերը և փրկել քաղաքակիրթ Արևելքը թուրանական Արևելքի վայրենությունից»<sup>18</sup>:

Ն. Ադոնցն ընդգծում է, որ «Ֆիրդոսին գիտի Իրանի այս դերը»<sup>19</sup>:

Վերլուծելով «Շահնամեում» արտացոլված ժամանակը և պարսկական պետության կատարած կարևոր դերը՝ Ադոնցը «Շահնամեի» հարուստ գանձարանից առանձնացնում է երկու կարևորագույն հանգամանք. «Շատանանք երկու հիշյալ թանկագին մարգարիտով՝ սեր, արևմտյան քաղաքականություն և հարգանք ազգային սկզբունքի»:

«Երկու պարզ ճշմարտություն, որին Արևելքը վաղուց ծարավի է, և որը մեծ բանաստեղծը թողել է սրբազան ավանդույն Արևելքին, որպես անհրաժեշտ պայման առաջադիմության և ճշմարիտ երախտիք ազգերի հավաք և համերաշխ գործակցության: Այս և միայն այս բավական է, որ արևելյան ժողովուրդները, որ ապրել են Առաջավոր Ասիայի երկնքի տակ,

---

<sup>18</sup> Նույն տեղը, էջ 491:

<sup>19</sup> Նույն տեղը, էջ 493:

երջանիկ, թե քախտագուրկ, գլուխ խոնարհեն պաշտամունքով հազարամյա դամբարանի առաջ, լի հավատով, որ Իրանը և հարևան երկրները պիտի հիմնեն իրենց վերածնունդը այդ սկզբունքների վրա»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Ադոնցը Ֆիրդուսու տունը համարում է «քաղաքակրթության հայտնություն» և արդարացիորեն ընդգծում է, որ այն մոտ և հարազատ է հայերի սրտին:

Ի դեպ, երբ 1934 թ. Խորհրդային Հայաստանում մեծ շուքով և հանդիսավորությամբ նշվում էր պարսիկ մեծ բանաստեղծ Ֆիրդուսու ծննդյան հազարամյակը, Միյուռքի մտավորականությունը ևս համերաշխությամբ հետևում է այդ գործընթացներին: Հայ ազգային մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, որն այդ տարիներին ապրում էր Փարիզում, ուշի-ուշով հետևել է Հայաստանում Ֆիրդուսու «Շահնամե»-ի հազարամյակին նվիրված հանդեսներին և միջոցառումներին: 1934 թ. վերջին Ավետիք Իսահակյանը գրում է «Ֆիրդուսի» խորագրով խորապես իմաստալից և շատ սրտառուչ խոսքի ձևակերպումներով չափազանց կարևոր մի հոդված: Այն տպագրվել է Հայ օգնության կոմիտեի («ՀՕԿ») ամսագրում 1935 թ. հունվարին (№ 1): Հայ բանաստեղծը տեսնում է «Շահնամե»-ի խորքը, խորատես հայացքով թափանցում անմահ երկի տողերից այն կողմ, նրա դյուցազներգությունը մի ծովածավալ համայնապատկեր է ներկայացնում մի մեծ ժողովրդի բազմադարյան գոյության: «Այնտեղ հանդես են գալիս Իրանի հավիտենական ոգորումները Թուրք-Թուրանի դեմ, հսկայատիպ դյուցազունների բախումները և հաղթանակները, ժողովրդի կենցաղն ու աշխարհաշեն արարքները, սովորույթները, մշակույթը, արքայական պալատների ճոխությունն ու պերճանքը,

ռամիկն ու գեղջուկը, ագատանին ու ոստանիկը՝ իրենց սերերով, զգացումներով, վշտերով, տենչերով, զրադաշտական կրոնի սկզբունքները, ծեսերը, պաշտամունքները:

Վիպական չափի և վիպական շնչի տակ այս վեհափառ գիրքը մի խիզախ, նմանը չունեցող համադրույթ է ներկայացնում գրական բոլոր սեռերի՝ հովվերգություն, քնարերգություն, ողբերգական տեսարաններ, իմաստասիրություն, մարդկային ճակատագրի, պետության, ապագա լավագույն հասարակարգի մասին:

Անագործայն, արյունահեղ գուպարների սուսկալի պատկերների մեջ միշտ ներկա է Զրադաշտի ոգին, միշտ բաբախում է արիական մարդու սիրտը՝ սիրող և կարեկցող, խանդավառ՝ գեղեցկով, վսեմով, ճշմարտով»:

1935 թ. բանաստեղծ, գրող, թարգմանիչ և դերասան Արման Կոթիկյանը՝ մեծատաղանդ մի անհատականություն, Փարիզում հրատարակում է «Ֆերդոուսի Թուսի եւ իր «Շահնամեն» (իր հազարամեակին առթիվ)» ուշագրավ և արժեքավոր աշխատությունը<sup>20</sup>: Գիրքը բաղկացած է հեղինակի նախաբանից և երեք մասից, երեք գլխից: Հեղինակը գրքի գլուխները, ըստ իրենց բովանդակած նյութի, վերնագրել է այսպես. ա) «Պարսկաստանը և իր մշակույթը», բ) «Ֆիրդուսի և իր կյանքը», գ) «Շահնամեն»-ն և իր աղբյուրները»: Ուսումնասիրությունից գատ, Արման Կոթիկյանը գրքում գետեղել է «Շահնամենի» երկու հատվածի իր թարգմանությունը՝ «Երգիծանք ուղղված Մահմուդ Շահի» և «Զամշիդ»:

---

<sup>20</sup> Արման Կոթիկյան, «Ֆերդոուսի Թուսի եւ իր Շահնամեն (իր հազարամեակին առթիվ)», Փարիզ, 1935:



խորքային է և պատմական: Նա «Շահնամեի» արժեքն ու նշանակությունը տեսնում է պարսիկ ժողովրդի էության և ճակատագրի համապատկերում: Այս մոտեցումով էլ Ավետիք Իսահակյանը անում է «Շահնամեի» ամենախորքային արժևորումը և տալիս ամենաբարձր գնահատանքը.

«Շահ-Նամեն ազգային անհատականության անկաշկանդ զարգացման եւ քաղաքական անկախության հոյակապ ներբողն է. «Շահ-Նամեն փրկել է Իրանը թուրքանալուց եւ արաբանալուց: Նա տարել է նրան վերածնունդից վերածնունդ, եւ այսօրւայ իրանեան սկսող վերածնունդը Պարսիկը պարտական է իր ճակատագիրը գրողին, իր հրամանատարին, մեծ եւ անմահ Ֆիրդուսիին:

Սակայն Իրանի համար Շահ-նամեն գրականութիւնից վեր մի ուրիշ բան է-մի յաւերժատեւ զօրութիւն է նա, մշտապէս ներկայ նրա կեանքում, մշտարժարժ հուր նրա հոգում, որը մնում է հերոսական արարքների մշտագործօն ազդակ նրա ապագայի համար, որի առաջ շողշողում է իբրեւ իդէալ Սասանեան փառապանձ Իրանը:

Շահ-Նամեն ճակատագիրն է մի ամբողջ ժողովրդի»:

Մեր համեստ կարծիքով, Իրանի ժողովրդին, իրանական մշակույթին, Իրանի մեծ բանաստեղծ Ֆիրդուսիին ու իր անմահ «Շահնամե»-ին հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի տված արժևորումն ու բնութագրումը երբևիցե տրված ամենաբարձր խորքային գնահատականն է:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Արման Կոթիկյանի և Ավետիք Իսահակյանի բնութագրումներն ու արժևորումները հիմնավոր են, նշանակալից և խարսխված են մեծ իմացության վրա:

1936 թ. Վիեննայում հրատարակվում է պատմաբան, բանասեր, գրող և հասարակական գործիչ Առաքել Սարուխանի (1863-1949) «Ֆիրդուսի և Մովսես Խորենացին» աշխատությունը: Նույն գրքում տպագրված է հեղինակի ֆրանսերեն մեկ այլ աշխատությունը, որը վերաբերում է վրաց գրականության մեջ իրանական ազդեցություններին:

Առաքել Սարուխանը 1920-ական թթ. ապրել է նախ Հոլանդիայում, ապա հաստատվել է Բելգիայում (Բրյուսել): Հեղինակ է բազմաթիվ և բազմապիսի աշխատությունների: Ա. Սարուխանի աշխատությունը հետաքրքրական կառուցվածք ունի: Իր բնույթով այն թեպետ մատենագիտական ուսումնասիրություն է, բայց նյութը տրվում է պատմաքննական և բանասիրական վերլուծումներով ու պարզաբանումներով, հարցերի գիտական քննությամբ: Հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձրել հայ-իրանական անցյալի դրվագներին և Խորենացու «Պատմության» ստեղծման պարագաներին, ինչպես նաև Խորենացու «Պատմության» և «Շահնամեի» մեջ առկա հայ-իրանական վիպական գրույցներին:

Աշխատությունն ունի հավելված, որտեղ հեղինակը մանրամասն նկարագրում է Փարիզի Ազգային գրադարանում Ֆիրդուսու հազարամյակին նվիրված հարուստ ու ճոխ ցուցահանդեսում ներկայացված նյութերը:

1942 թ. Երևանի պետական համալսարանի հրատարակությամբ լույս է տեսնում մեծավաստակ լեզվաբան Հրաչյա Աճառյանի (1876-1953 թթ.) «Ֆիրդուսի» աշխատությունը՝ «Օտար աղբյուրները Հայաստանի մասին» մատենաշարով (№ 4, պարսկական աղբյուրներ): Այն մեծ գիտնականին վայել, խորապես գիտական ուսումնասիրություն է: Աճառյանը բե-

րում է բնագրի պահլավերեն տողերը՝ դիմացը դնելով դրանց թարգմանությունը: Այնուհետև շատ մանրամասն ու հանգամանակից ծանոթագրություններում քննության է առնում բերված տողերը, անում է բազմաթիվ ճշտումներ ու պարզաբանումներ և, որ կարևորն է, անվերապահորեն չի ընդունում «Շահնամեի» որոշ բնութագրումներ, այլ ենթարկում է գիտական քննության՝ մատնանշելով թերություններն ու վրիպումները:

1951 թ. գրող և թարգմանիչ Միհրդատ Թիրյաքյանը (1885-1979), որ որդին է թարգմանիչ Հարություն Թիրյաքյանի, Նյու Յորքում լույս է ընծայում «Շահնամե Ֆիրդուսու. Հատուածներ» գիրքը (158 էջ), որի տիտղոսաթերթին արձանագրված է՝ «Պահլավերեն բնագրից թարգմանեց Միհրդատ Թիրյաքյանը»: Թարգմանիչը գիրքը ձոնել է իր հոր՝ Հարություն Թիրյաքյանի հիշատակին:

Գիրքը բացվում է Ֆիրդուսուց առնված վեց տողով, որ կարելի է համարել պարսից մեծ բանաստեղծի ինքնաբնութագրում-ինքնագնահատականը: Դրան հաջորդում է թարգմանչի ծավալուն «Յառաջաբան»-ը (էջ 9-49), ուր նա ոչ միայն ներկայացնում է իր թարգմանական աշխատանքի սկզբունքները, այլև տալիս է Ֆիրդուսու կյանքի պատմությունը և «Շահնամեի» իր քննությունն ու գնահատականը: Մ. Թիրյաքյանի «Յառաջաբանը» գրված է 1947 թ.: Այստեղից կարելի է եզրակացնել, որ թարգմանությունը կատարված է եղել մինչև հրատարակությունը:

Թարգմանությունը չափածո է, հատվածները առնված են «Շահնամեի» տարբեր դաստաններից: Գրքի վերջում տրված է «Ցանկ թարգմանութեանս մեջ երեւցած սակաւ գործածական

բառերու»: Գիրքը լաթակազմ է, տպագրությունը՝ բարձր, որպես ներդիր դրված է Ֆիրդուսու դամբարանի լուսանկարը (Թուս, Խորասան):

1950-ական թվականների երկրորդ կեսին խորհրդային երկրի հասարակական-քաղաքական կյանքում ու գրական-մշակութային մթնոլորտում նշանակալի փոփոխություններ տեղի ունեցան, որոնք հնարավորություն ընձեռեցին այլ ժողովուրդների գրականությունն ու մշակույթը ուսումնասիրել առավել ծավալուն ու ազատորեն: Հայաստանում նույնպես թարգմանչական գործը ընդարձակում է իր սահմանները:

Տասնամյակի վերջերին Հայաստանում առանձնապես մեծանում է մասնագիտական ու թարգմանչական ճանաչողության ձգտումը պարսկական գրականության և մշակույթի հանդեպ:

Այսպես, 1957 թ. լույս է տեսնում Հաֆեզի «Լիրիկա» խորագրով ժողովածուն (Երևան, Հայպետհրատ, 115 էջ), 1958 թ.՝ Սաադիի «Գուլեստանը» (Երևան, Հայպետհրատ, 216 էջ), 1959 թ.՝ Օմար Խայամի «Քառյակներ» ժողովածուն (Երևան, Հայպետհրատ, 242 էջ) և այլ գրքեր:

Անհրաժեշտություն է դառնում մանավանդ գիտականորեն ուսումնասիրել հայ-իրանական գրական առնչությունները: Եվ ահա, 1963 թ. ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակում է հայագետ և իրանագետ Բաբկեն Չուքասզյանի (1923-1997) «Հայ-իրանական գրական առնչությունները (V-XVIII դդ.)» ընդգրկուն գիտական ուսումնասիրությունը (242 էջ): Հեղինակն իր աշխատանքը ենթախորագրել է «Հետախուզումներ»: Եվ իրոք, Բ. Չուքասզյանն իր առջև դրված խնդիրը վճռելիս կատարել է

բանասիրական ու պատմագիտական խորը հետախուզական աշխատանքներ:

«Հայ-իրանական գրական առնչությունները (V-XVIII դդ..)» ընդհանուր նկարագրական, բայց բովանդակալից ակնարկից հետո հեղինակն ըստ ամենայնի ներկայացնում է մի շարք կարևոր խնդիրներ՝ ա) Բյուրասպի Աժդահակի առասպելն ըստ Մովսես Խորենացու, բ) իրանական վիպական գրույցների արձագանքները Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում», գ) Ֆրիկը պարսկական քառյակի թարգմանիչ և դ) «Գրիգոր Աղթամարցու» տաղերի պարսկական հատվածների վերծանումը:

Պարսկական գրականության հետ հայ գրական կապերի շուրջ խոսելիս հետազոտողի ելակետը պարսից մեծ բանաստեղծ Ֆիրդուսին է և նրա հանճարեղ պոեմը: Ըստ հետազոտողի, և նա միանգամայն իրավացի է՝ Ֆիրդուսին ոչ միայն կանխորոշել է պարսից գրականության հետագա ընթացքն ու զարգացումը, այլև բարերար ազդեցություն է ունեցել այլ ժողովուրդների, անշուշտ նաև հայ գրականության վրա:

1950-ական թվականների վերջերից պարսկական պոեզիայի թարգմանությամբ է զբաղվում արձակագիր և թարգմանիչ Սերգեյ Ումառյանը (1920-1994): Նա թարգմանել է Հաֆեզի, Ռուդարփի, Աբդուռահման Ջամիի, Խաղանիի բանաստեղծություններն ու քառյակները:

Նրա թարգմանությամբ 1962 թ. առանձին գրքով լույս է տեսել Ֆիրդուսու «Միավուշ. Շահնամեից» (192 էջ), 1964 թ.՝ «Զալ և Ռուդարփե» (192 էջ), 1967 թ.՝ «Ռուստամ և Սոհրաբ» (180 էջ) երկերը: Ս. Ումառյանն իր թարգմանությունները կատարել է 1975 թ.: Նա վերը թվարկված իր թարգմանությունները վերանայել է և միավորել մեկ ժողովածուի մեջ ու հրատարակել

«Ֆիրդուսի. «Շահնամե»» խորագրով: Ցավոք, այդ գրքերի վրա գրված չէ, թե ինչ լեզվից է թարգմանել. բնագրի՞ց, թե՞ միջնորդ լեզվից: Այնուամենայնիվ, մեր ժողովուրդը սիրով ընդունել է այդ գրքերը: Դրանք ժամանակին տպագրվել են մեծ տպաքանակով և արագորեն սպառվել: «Ռոստամ և Սոհրաբ»-ը, օրինակ, տպագրվել է 25000 տպաքանակով, իսկ վերջինը՝ «Շահնամեն»՝ 10000 տպաքանակով:

1967 թ. Երևանում լույս է տեսնում գրականագետ Ավետիս Շահուվարյանի «Շահնամեն և հայկական աղբյուրները» աշխատությունը (188 էջ): Ուսումնասիրությունն ունի «Ներածություն», որից հետո հեղինակը ներկայացնում է Ֆիրդուսու կյանքը և այնուհետև՝ «Շահնամեն»: Աշխատության ուշագրավ մաս են կազմում «Հայոց մասին Ֆիրդուսու տեղեկությունները հայկական աղբյուրների բաղդատությամբ», «Իրանի էպիկական և առասպելական գրույցները նախաֆիրդուսյան շրջանի հայ մատենագրության մեջ և «Շահնամեում» բաժինները: Այնուհետև հետազոտողը քննարկում է «Շահնամեի» կապը հայ ժողովրդական «Մասնա ծոեր» էպոսի հետ, դիտարկում «Ռոստամ-Չալ» վեպի հայկական պատումները և «Շահնամեն» խնդիրները: Աշխատության հեղինակը վերջում ներկայացնում է ««Շահնամեն» և հետագա հայ գրականությունը» համառոտ տեսությունը:

Հայ-իրանական առնչությունների, մշակութային ավելի բարձր կապերի և հարաբերությունների նոր փուլը սկսվում է Հայաստանի անկախության հաստատումից հետո: Դրան մեծապես նպաստում են երկու պետությունների միջև դիվանագիտական բարձր հարաբերությունները և մեր երկու երկրների միջև ստեղծված բարիդրացիական ջերմ կապերը, որտեղ ամուր նախահիմք են ծառայում նաև գրականության և մշա-

կույթի հանդեպ հայ և պարսիկ ժողովուրդների ունեցած դարավոր ավանդույթները:

Անկախության հաստատումից հետո մեր գրական մամուլի էջերում տպագրվում են պարսկական ժամանակակից գրականության նմուշների մեծաթիվ թարգմանություններ, թարգմանաբար առանձին գրքերով լույս են տեսնում պարսիկ գրողների և բանաստեղծների երկերը, վերահրատարակվում են նախկին հրատարակությունները, հիմնականում՝ դասական հեղինակների ճանաչում և արժևորում ստացած թարգմանությունները: Այդպես, օրինակ, 2009 թ. վերահրատարակվում է Սաադու «Գուլեստանը»:

Եվ, անշուշտ, վերահրատարակվում է նաև Ֆիրդուսին: 2009 թ. վերատպվում է «Ռուստամ և Սոհրաբ»-ը, իսկ 2012 թ.՝ ամբողջական «Շահնամեն» («Անտարես» հրատ., 544 էջ): Հայ-իրանական գրական առնչությունների նոր փուլն, իհարկե, գլխավորում է Ֆիրդուսին, որը բնական ու խորհրդանշական երևույթ է այն առումով, որ նրա գործերում խտացված է այն լավագույնը, որ կերտել է պարսից միտքն ու հոգին:

Հայ բանասիրական-մշակութաբանական միտքն այսօր էլ ակտիվորեն շարունակում է իր ուսումնասիրական-ճանաչողական գործունեությունը պարսից մեծ բանաստեղծ Ֆիրդուսու և իր «Շահնամեի» հանդեպ: Ասվածի լավագույն վկայությունն է վերջերս լույս տեսած «Ռուստամ Զալ, հայ-իրանական դյուցազնավեպը» մեծադիր ժողովածուն (Երևան, 2021 թ., 370 էջ): Գիրքը հրատարակել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

«Ռուստամ Զալ, հայ-իրանական դյուցազնավեպը» ժողովածուի մեջ ընդգրկված է քսանհինգ պատում: Վերջին ութ պատումը գրի է առել նշանավոր բանասեր և ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի (1928-

2019 թթ.) դեկավարած ազգագրական արշավախումբը, ուստի և պատահական չէ, որ ժողովածուն նվիրված է նշանավոր գիտնականի հիշատակին:

Ժողովածուն ունի երկու առաջաբան՝ «Ռուստամ Զալ, հայ-իրանական դյուցազնավեպը» (հեղինակ՝ Բանասիրական գիտությունների թեկնածու Հայկ Համբարձումյան) և «Ժողովածուի նյութերի գիտական տառադարձության առանձնահատկությունները» (հեղինակ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր Հայկանուշ Մեսրոպյան):

Ժողովածուն ունի նաև տեղեկատվական նյութերի կարևոր հավելված՝ «Պատումներում հանդիպող անձնանունների և կերպարների ցանկ», «Տեղանուններ և էպիկական վայրերի անուններ» և «Բառարան»:

Ժողովածուն, իհարկե, զգալի ներդրում է հայ-իրանական մշակութային հնագույն կապերի և առնչությունների ուսումնասիրության և ճանաչողության գործում, ինչպես նաև վկայությունն է մեր ժողովրդի մշակութային գիտակցության մեջ Ֆիրդուսու «Շահնամեի» արժանապատիվ վերաբերմունքի:

Բացի բուն «Շահնամեի» թարգմանություններից, հայ իրականության մեջ ուշ խորհրդային և անկախության շրջանում շարունակվում է պարսից պոեզիայի թարգմանությունը, և այս ոլորտում հիշատակության արժանի են հատկապես պրոֆ. Արմանուշ Կոզմոյանի տողացի թարգմանությամբ «Մարգարտաշարը» և այլ գործեր, որոնցում ընդգրկված են պարսից դասական հեղինակների պոեզիայից ծաղկաքաղ արված նմուշներ<sup>22</sup>:

---

<sup>22</sup> Տե՛ս **Կոզմոյան Ա.**, «Մարգարտաշար», Երևան, 1990; **Խույնի՝** «Ռուդափ», Երևան, 1995; **Խույնի՝** «Պարսից պոեզիայի ընտրանի», Երևան, 2004:

Վավերական իրողություն է, որ իրանական էպոսը մեզանում հայտնի է եղել շատ հին ժամանակներից: Այն վաղուց ներկա է եղել մեր ժողովրդի մշակութային գիտակցության և հիշողության մեջ, իր արտացոլումն է գտել մեր ժողովրդական բանահյուսության մեջ և առաջին հերթին «Սասնա ծռեր» հերոսական էպոսում և ժողովրդական հեքիաթներում, որին մեծապես նպաստել է Ֆիրդուսու «Շահնամեի» իմացությունը:

Ժողովուրդը բանավոր պատմել է իրանական էպոսի իր ընկալումները և տարբեր պատումներով փոխանցել սերունդներին: Այդ պատումների գրառումը սկսվել է 1880-ական թթ. և շարունակվել մինչև 1974 թ.: Գրառումները արել են մեր նշանավոր ազգագրագետները և մեծանուն գիտնականները՝ Գարեգին Սրվանձտյանցը, Գրիգոր Խալաթյանցը, Գարեգին Հովսեփյանը, Երվանդ Լալայանը և այլ հայտնի անձինք: Դրանց մի մասը տպագրվել է ժամանակի մամուլի էջերում, մյուս մասը, ցավոք, մնացել է անտիպ:

Հենվելով մեր կողմից նշված վերոհիշյալ փաստերի վրա՝ վստահորեն կարելի է ասել, որ ապագայում ևս մեր ժողովրդի բնականոն կյանքի ընթացքում հայ-իրանական գրական և մշակութային կապերն ու առնչությունները նոր, ավելի համակողմանի ու հարուստ ընթացք և զարգացումներ են ունենալու:

Ինչպես վերևում ներկայացրինք, «Շահնամե»-ի հազարամյակը Հայաստանում նշվել է մեծ շուքով, գրական և գիտական բացառիկ վերաբերմունքով: Իրանական գրականության և մասնավորապես «Շահնամեի» հանդեպ հայության հետաքրքրությունը շարունակվում է նաև հետագա տասնամյակներում:

Անկախության հասած Հայաստանում առանձնապես մեծանում է հետաքրքրությունը իրանական մշակույթի և մաս-

նավորապես «Շահնամե»-ի հանդեպ: Դրա հիմնական պատճառը, նախ՝ հարևան մեծ ժողովրդի անգնահատելի բարեկամության գիտակցումն է և ապա՝ պարսկական-իրանական մշակույթի նոր ու ամբողջական ճանաչողության անհրաժեշտությունը:

## سخنی چند درباره ایران و ارمنستان

